



Վ. ՇԻԱԿԻ

ՄԵՐ ՄՈՎՑՅԻՆ
ԾԱՌՊԱՐՅԻՆ

30 MAY 2011



-4 MAR 2013

2763

MISS YAM. 86

891.71L

F-69

ՎԻՏ. ԲԻԱՆԿԻ

Ug

ՄԵԾԾՈՎԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՇՀԻՆ

Թուսերենից բարգմանեց
Մ. Խ Ա. Ն Զ Ա. Դ Յ Ա. Ն

ՀԱՐԻԿԸ ՅԵՎ ՆԿԱՐՆԵՐԸ
Տ. ՇԻՇՄԱՐՑՈՎԱՅԻ



Պատ. Խմբ. Ա. Հայրյան
Մերագրիչ՝ Հ. Դոլուխանյան

Դրավլիսի լիազոր 402, պատվեր 506,
Հըստ. 3679, տիրած Ք000
Պետհրատի տպարան, Ցերկան, II Գնուռի, 4

Հանձնված ե արտադրության 29 մարտի 1936 թ.
Ստորագրված ե տպելու 21 ապրիլի 1936 թ.

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.

ВИТ. БИАНКИ
НА ВЕЛИКОМ МОРСКОМ ПУТИ
ГИЗ ССР Армении, Эривань.

Հարգելի քաղաքացի նախագահ,

Այսոր, 19... թվականի ապրիլի 7-ին, յես ազատ եմ ար-
ակում մի վայրի սագ՝ սպիտականակա կազարկաների*)
ցեղից:

Այս բոչունը յես պատահաբար գնեցի Լենինգրադի փո-
ղոցներից մեկում անցյալ տարի աշնանը: Մի վորոտդ այն
տանում եր ըուկա վաճառելու: Նա պատմեց, վոր վայրի
սագին բռնել ե մի բանի որ առաջ միննական ծոցի ափին,
ինչ վոր տեղ նրանին բռնական դենք: Թոչունի բաքերը խը-
նընվել եյին ձկնորսական ուղկանի մեջ:

Վայրի սագը ձմեռն անցկացրեց իմ բակում Վիտեբսկ
բաղաբում: Շուտով նա ձեռնուն դարձավ: Մինչեվ անգամ թույլ
եր տալիս իմ վորդուն ըոյել մեջքը, յերբ նրա համար կերա-
կուր եր բերում: Սակայն գարնանը նա սկսեց վայրենանալ:
Նրան կապող թոկը ձիգ տալուց ու կտցահարելուց յեվ թե-
փերի բափահարումից նետ եր կուահել, վոր նա ձգտում է
ազատության: Յես ու վորդիս վորուեցին բաց թողնել նրան:
Բայց մենք այնքան եյինք մերմացել մեր վայրի գերունու նետ,
վոր կցավեյինք բաժանվել նրանից, յերե հույս չունենայինք,
թե յերեվիցե լուր կառնենք նրա մասին: Յես ձեռք բերի
Մոսկվայի Թունաբանական կոմիտեյից բաց թողած Ը սե-
րիայի № 109 ալյումինի ող: Բաց թողնելուց առաջ, մենք
այս կհազցնենք բոչունի վոտֆին:

*) Վայրի սագերի նրբակտուց տեսակը: Ծ. Խ.


Յեթե վորեմի մեկը նորից բռնի մեր վայրի սագին, Երկասի նրա բարի ողը յեվ գրի այդ մասին Թոշնաբանական կոմիտեյին, չզլանաք գրել ինձ Վիտեբսկ՝ վորքա՛ն հեռու յենա բոել յեվ ինչ հանգամանեցերում ե բռնված:

Այս նամակը գրող մարդը ներքեռում գրեց իր հասցեն, ստոքագրեց և դրեց ծրարի մեջ՝ Մոսկվայի Թոշնաբանական կոմիտեի հասցեկով:

Հետո վեր կացավ սեղանից և մոտեցավ դռանը:

— Միշկա — բարձրաձայն կանչեց նա վորդուն, — գնանք բաց թողնենք սագին:

Մի քանի բոպելից հետո հայր ու վորդի դուրս յեկան բակը և գնացին դեպի շան նախկին բունը, վորը վայրի սագին վորպես բնակարան եր ծառակում:



Ա. Ռ. Ջ. Ֆ. Լ. Ո. Խ.

Վայրի սագը բնի մոտ նստած, կատաղաբար ծվատում եր կտուցով վոտին կապած թոկը: Բայց նկատելով մոտեցող մարդկանց, նա իսկուն թողեց այդ զբաղմունքը, ամբողջովին շտկվեց և վեր բարձրացրեց դլուխը: Այժմ նա հասակով ընտանի սագի չափ եր յերևում, թեև իսկապես զգալի չափով փոքր եր: Առաջքից հեշտ եր հասկանալ, վոր նա վայրի թոշուն եւ: Նրա ամբողջ մարմնի վրա փետուրները դարսված ելին, ինչ վոր առանձնապես հարթ ու գեղեցիկ, ինչպես յերբեք դարսված չեն լինում տնային թոշուններինը: Նրա տեսքը վակելչակազմ եր, ամուր, կուրծքն ուռուցիկ, զիզն առաձգական: Նրա կարճ, լայն դրած վոտքերն ամուր դիմնար ելին տված գետնին: Ճակատին կիսալուսնի պես փալում եր զուտ սպիտակ բիծը:

Յերբ հայր ու վորդի մոտեցան նրան, նա ճղճղոցով մի կողմ նետվեց: Թոկը լարվեց և հետ ձգեց նրան: Վայրի սագի գլուխը թափով դիպավ գետնին:

Միշկալի հայրն այս բանից ողտվեց: Նա հետեւից ամուր բռնեց թոշունի թերերից և բարձրացրեց ողի մեջ:

— Բաց արա թոկը, — ասաց նա Միշկալին:

Մինչդեռ Միշկան զբաղված եր պինդ կապած հանդուցով, սագը բոլոր ուժով ուզում եր դուրս պրծնել: Զափահաս տղամարդը հաղիվ եր պահում նրան:

— Դե, Միշկա, — ասաց հայրը, յերբ վերջապես թոկն ընկալ գետնին, — այժմ հրաժեշտ տուր վայրի սագին և բարի ճանապարհ ասա:

Միշկան ուզում եր շուկը թուչունին: Հենց ձեռքն ուզում եր մեկնի, իսկուն հետ փախցրեց. սագն ահեղ կերպով ֆշաց նրա վրա: Միշկան բոլորովին չեր ցանկանում, վոր նա իրեն կտուցով խփի: Նա արդեն մի անգամ փորձել եր, թե ինչքան գուրեկան ե ալդ. յերկու շարաթ՝ նրա վոտքի կապածը չեր անցնում:

— Հը, բարեկամ, վոնց ա—ժպտաց հայրը: Վոչինչ, յես կապահեմ վիզը: Իսկ դու աչ գրանիցս հանիր ողը և տափակապունդ աքցանը:

Միշկան տվեց:

— Դեհ, — շարունակեց հայրը, — հետ բաց արա ողը և հազցրու սագի թաթին: Արիր: Նրա ծալը երը լավ սեղմիր աքցանով: Ալդպէս: Յեթե հիմա վորեն մեկի ձեռքն ընկնի, յես ու դու սրա մասին դեռ կլսենք:


— Բուռըդ բաց արա... — կասկածով փնթփնթաց Միշկան:

— Հը, ինչ ես ասեմ, Տեսնում ես, ողի վրա հասցե և համար կա: Յեթե մեկը բռնի մեր սագին, նա կհաղորդի սրա ողի համարն այս հասցելով թուչնաբանական կոմիտելին: Յես ել իմ հերթին դրել եմ կոմիտելին, վորպեսզի այնտեղից հաղորդեն մեղ վորտեղ ե բռնվել սագը: Հասկանալի՞ յե:

— Հասկանալին՝ հասկանելի յե, — փնթփնթում եր Միշկան, — բայց ենքան ել հավատալու բան չե, վոր նա մի անգամ ել վորեն մեկի ձեռքն ընկնի:

— Ո՞վ գիտի: Դեհ, հիմա յես նրան բաց եմ թողնում, — ասաց հայրը. — արդեն ձեռքերս հոգնեցին նրան պահելով:

Թուչունին նա վերև զցեց ողի մեջ: Վայրի սագը թափահարեց



թևերը և թռավ ցածր՝ գետնի յերեսով, բայց հանկարծ զգալով, վոր նրան վոչինչ չի կապում գետնին, նա սլացավ դեպի վեր, թռավ-անցավ ցանկապատի վրալից և բարձրացավ տանիքից վերև:

— Ղոնդ, ղոնդ—լսվեց վերեսում նրա ուրախ աղաղակը:

Մի ըոպելից հետո նա փոքրիկ մժեղի չափ եր յերեսում: Հայր ու վորդի նայում ելին նրա հետելից:

Յերբ նա բոլորովին անհայտացավ՝ հայրը Միշկալին ուղարկեց թուչնաբանական կոմիտելին նախագահին զրած նամակը փոստարկողը զցելու:

ՅԵՐԿՐՈՒԴԻ ԳԼՈՒԽ

Վայրի սագը թուչում եր յերկրից շատ բարձր: Բարձրում վզզում եր քամին: Շուրջը, վորքան կտրում եր աչքը, վոչ վոք չեր յերեւում: Վերեսում արագ դեպի նրան լողում ելին սպիտակ ամպերը:

Յերկրիը ներքեսում սե եր յերեսում: Միայն հովիտներում տեղակ դեռես ձյուն կար: Ալնտեղ ներքեսում, վոտքերի տակ, կա-


մաց-կամաց անհայտանալով, դեպի հետ ելին շարժվում դաշտերը, անտառները, գյուղերը, գետերը։ Նրանց վրա սև թռչունների մեծ յերամը, թերերը թափահարելով, թվում եր, թե անշարժ քարացել ե ողի մեջ։ Ժամանակ առ ժամանակ, թռչուններից մեկն ու մեկը, թերերը ծալելով, անակնկալ կերպով գահավիժում եր ցած։ Բայց հանկարծ, հենց գետնի մոտ, պահելով սրբնթաց անկումը, շտապ վերադառնում եր դեպի յերամը։

Այդ թռչողները սերմանագումներն ելին։ Նրանք ել քիչ-քիչ հետ մնալով, չքացան աչքից։ Վայրի սագը շարունակ առաջ եր սլանում։ Արդեն մի քանի ժամ եր անցել այն ժամանակվանից, ինչ նա իրեն ազատ զգաց։ Նա այժմ շտապում եր ուրիշ սագեր գտնել, վորպեսզի նրանց հետ միասին կատարի յերկար և վտանգավոր ճանապարհը դեպի հայրենիք։ Բայց մինչև այժմ բարձրում նա վոչ վոքի չհանդիպեց։

Այ, յեթե նա կարողանար հասնել այն տեղը, վորտեղ կես տարի առաջ նրան բոնեց վորասորդը։ Նա լավ եր հիշում այն տեղը։ Այնտեղ ծովն եր։ Այնտեղից ե անցնում Մեծ ծովալին ճանապարհը։ Սրանով, յերամ-յերամի հետեւից, շարվեշարան անցնում ելին վայրի սագերը, կարապները, բագերը, կտցարները և ուրիշ ծովալին և առափնյա թռչունները։ Մեծ ճանապարհի վրա նա բաժանվեց հարազատ յերամից և իր անբաժանելի ընկեր վայելչակազմ արու սագից։ Կարելի լե նա շուտով կգտնի նրան։

Վորասորդը նրան այնտեղից տարավ մութ տոպլակով։ Ճանապարհը նա միտը պահել չեր կարող։ Բայց անբացատրելի զգացումը, վոր ծանոթ ե միայն թռչուններին, անսխալ կերպով նրան ցուց եր տալիս ուղիղ ճանապարհը։

Յերկարատեև և արագ թռիչքը չնոգնեցրեց վալրի սագին։ Թղունաները շնչարգելություն չունեն։ Թերերի ամեն մի թափահարումը նրա թոքերը լցնում եր ոդով և նրանց միջոցով ամբողջ մարմնի ողալին պարկերը և մինչև անգամ դատարկ վոսկորները։ Նույն մկանները, վորոնք շարժում ելին նրա թերեր՝ կամ յերկայնաձգում, կամ սեղմում ելին այդ պարկերը։ Ողն ազատ մտնում և դուրս եր



գալիս նրանց միջից։ Յեվ վայրի սագի շնչառությունը մնում եր նույնպես հանդարտ, վորպես տեղը հանդիսա նստած ժամանակ։ Սովը միայն կարող եր հարկադրել նրան գետին իջնել։

Նա արդեն ուտել եր ուզում։ Ամբողջ մարմնին սկսեց տիրել անդուրեկան թուլություն, ավելի և ավելի դժվարանում եր թևերի շարժելը։ Մագն սկսեց կամաց-կամաց իջնել, աչք ածելով հարմար տեղ կերակրվելու համար։

Մենակության մեջ կերակրվելը վտանգավոր ե։ Կերակրի համար ջրի մեջ ընկղմվելիս կամ գետնի վրա վորոնելիս, չես ել նը-կատի թշնամու գաղտագողի մոտենալը։ Մագն ուշադրությամբ դիտում եր՝ չկան արդյոք այնպիսի թուչուններ, վորոնց կարելի լիներ մոտենալ գոնե կերակրվելու ժամանակ։

Իրենից ցած նա տեսնում եր դաշտեր, պուրակներ, անտառակներ։ Յերբեմն ցածից բարձրանում ելին մանրիկ արտուտներ, և նրանց յերգերը զընդում ելին ողի մեջ։

Վայրի սագն ալստեղ-ալստեղ սկսեց նկատել փոքրիկ կերպարանքներ՝ մարդկանց, կովերի, ձիերի, վորոնք կարծես սողում ելին գետնի յերեսին։

Աշխատելով նրանցից հեռու մնալ, սագը թուավ ծառերի հենց կատարների վրայից։ Հիմա միայն նկատեց, վոր ամբողջ անտառի միջով, անընդհատ շարքերով տեղափոխվում ելին մանր անտառալին թուչուններ։ Անդադար ճյուղից ճյուղ թուչելով, ծառից ծառ ճախրելով, նրանք յերամիկներով շարունակ առաջ ելին շարժվում ճչալով, սուլելով, ծլվլալով, յերգելով։ Նրանք առանձնապես շատ ելին անտառափեշերին։ Այստեղ հնչուն կերպով ճչում ելին սերինսաները, վայրկենապես յերեսում և անհայտանում ելին վշասարժակների կարմիր գլխարկները, նարինջի և սպիտակ գույներով փայլվը-լում ելին տագնապալից բզզացող սերինոսների թևերը, բարձր ճկճկացնում ելին գորշ կեռնեխները։

Ժամանակ առ ժամանակ յերամիկները ցած ելին թուչում և կարկուտի պես փոփում ելին գետնին։ Թուչուններն ուրախ թուչկուտում ելին, արագությամբ կտցահարելով կերը։ Բայց հանկարծ,



կարծես ինչ վոր անտեսանելի նշանով, մեկը մտուսի հետեւից նորից թուչում ելին ծառերին և ճյուղերի վրայով շարունակում ելին իրենց ճանապարհը։

Վայրի սագն ուրախանում եր ալդ փոքրիկ ուղեկիցներով։ Բայց քաղցը, քաղցը հարկադրում եր մտածել ուրիշ բանի մասին։ Հարկավոր եր վորքան կարելի յե շուտ դանել մի տեղ, վորտեղ հնարավոր լինի անվտանգ և կուշտ կերակրվեր։

Վերջապես առջեին, հեռու, սև հողի վրա փայլեց ջրի նեղ շերտ։ Նա սկսեց արագությամբ աճել, աճել և շուտով վայրի սագն իր առաջին տեսավ լայն, ջրառատ գետ։ Գետն ալսպես եր դուրս յեկել ափերից, վոր նրա ցածր ափերի սև, դեռևս տերեկներով չծածկված թփերը դուրս ելին ցցված ուղղակի ջրի միջից։ Վայրի սագը նկատեց թփերի միջև լողացող թուչուններ։ Նրա կրծքում սիրտն սկսեց բարախել, հանկարծ մերոնք լինեն։ Նա ճչաց զիլ կանչող ձախով։

—Ղոնդ—ղոնդ—ղոնդ։

— Դվամկ, դվամկ, դվամկ — պատասխանեցին նրան գետից:
Զե, այդ սագեր չեն... այդ բագերն ելին դվզվում:

Բայց մենակ, հոգնած, քաղցած վայրի սագն ուրախ երև և այդ
հանդիպումին: Զե վոր դվզվան բագերը նրա հեռավոր ազգակա-
նուհիներն են: Նրանք նույն կերակուրն են ուտում, ինչ վոր ինքը:
Նա մինչեւ անգամ մի քիչ հասկանում եր նրանց լեզուն:

Վայրի սագը դանդաղացրեց թոփչքը, ոդում արավ մեկ, յերկու,
յերեք շարունակ փոքրացող շրջան: Հետո աղմուկով շաղ տալով
ջուրը, ծանրությամբ իջավ բագերի կողքին: Նրանց ամբողջ յերամն
իսկույն լողալով հավաքվեց, շրջապատեց վայրի սագին, բարձրա-
ձայն դվզվոց բարձրացավ, յերեսում եր, վոր բագերն ուրախ ելին:

Մի ըոպելից հետո սագն արգեն նրանց յերամի հետ կերակուր
եր ճարում: Նա արագությամբ, գլուխը դեպի ցած, գլխիոնձի արավ:
Նրա նարինջա-դեղին թաթերը յերեացին ուղիղ ջրի յերեսին:
Լցնելով կտուցը խոտով և մանր ջրային կենդանիներով, վայրի
սագը դուրս լողաց, ջուրը քամեց կտուցի կողքերի խիտ շերտիկ-
ների միջով և կուլ տվեց փափուկ կերակուրը: Շուրջը, փալվիե-
լով թերի վրայի մանուշակագույն-կապույտ հայելիներով, նույն
ձևով գլխիոնձի ելին տալիս բագերը: Գետի վրա յերեսում և ան-
հայտանում ելին թուշունների պոչերն ու գլուխները: Բայց ամեն
անգամ, հենց վոր նրանցից մեկը դուրս եր լողում, նա իսկույն
բարձրացնում եր գլուխը և աշալուրջ դիտում եր շուրջը: Վոչ մի
թշնամի չեր կարող աննկատելի մոտենալ յերամին: Մինչդեռ մի
քանի թուշուններ սուզվում ելին, մլուսները, դուրս լողալով, պա-
հապան ելին կանգնում: Բավկական ե մի նախազգուշացնող ճիչ,
վոր ամբողջ յերամն ականջները սրի և, կարիքի դեպքում, նույն
ըոպելին փախուստի դիմի:

Բայց այս անգամ եր, ինչպես միշտ լինում ե, փորձանքը յե-
կավ անսպասելի: Բագերից մեկը հազիվ եր նկատել թփերի հետե-
զին մեծ բագելի թերի շարժումը, վոր նա արդեն նրա գլխա-
վերելին եր: Դվզվանի հուսահատ ճչոցը մի ակնթարթում իրար
խառնեց ամբողջ յերամը: Հարձակումն այնքան արագ եր, վոր



թոչունները չկարողացան կռահել վորտեղից և սպառնում վտանգը:
Բոլորը միանգամից ցրիվ յեկան: Վայրի սագը խցկվեց թփի տակ,
բագերը սուզվեցին ջրի տակ, իսկ նրանցից մեկը ոդ բարձրացավ:
Հենց այդ ել պետք եր բագելին: Մըրիկի պես սլացավ թփի
վրայից և հարվածեց բաղին:

Ոդի մեջ պտտվեց փետուրը և որորվելով, սկսեց դանդաղ իջնել
ջրի վրա:

Իսկ բագեն արդեն հեռու յեր՝ մեռած վորսը ճիրանների մեջ:
Վայրի սագը թփի արանքից տեսնում եր, ինչպես լայն գետի
մլուս ափին, նա նստեց զառիվալրի վրա և սկսեց թոչունի փորը
դուրս տար: Հետո նա փետրահան արավ նրան և սկսեց ուտել:
Վայրի սագը նալեց շուրջը: Վոչ մի տեղ բագերը չելին յերեսում:
Ահից նրանք խցկել ելին թփերի տակ և չելին վստահանում թագըս-
տից դուրս գալ:

Այսինչ բազեն վերջացըք ճաշը, խնամքով հողին քսելով մաքըք կտուցը և նըանով սղալեց իր կրծքի և թևերի փետուրները: Հետո ծալեց մի վոտքը և դադարեց շարժվելուց: Միայն նրա գլուխը գիշատիչ և կեռ կտուցով, իերենմն դանդաղ դառնում եր մի կողմից մյուսը, և խոշոր փալուն աչքերը հանգիստ և վեհորեն նայում ելին շուրջը:

Այդ խոշոր չվող սապսան բազե լեռ, մեկը՝ ամենահանդուզն փետրավոր գիշատիչներից:

Նա հասակով փոքը եր սագից, բայց սա անհաղթելի սարսափ եր զգում միմիայն նրա տեսքից: Յեվ դա վախկոտություն չեր: Թեև բազեն իր մեծությամբ ագռավի չափ ե, բայց ողում նրանից չեն փրկվում մինչև անդամ այնպիսի խոշոր և ուժեղ թոշուններ, ինչպես ձկնկուլներն ու սագերը:

Գետնի վրա և ջրում բազեն ձեռք չի տալիս թոշուններին: Միայն ջահել անփորձ բազեները, պատահում ե, վորսին հարվածում են շատ ցածր գետնի վրա: Յեթե նրանք պատահմամբ վրիպում են՝ մահացու կերպով ջարդում են կուրծքը գետնին: Հասակավոր բազեն հարձակվում ե դարանից և խրտնեցնելով, հարվածում ե վերեկց միշտ առանց վրիպելու:

Վայրի սագի բախտն եր, վոր խառնաշփոթության մեջ նա ող չբարձրացավ: Բազեն միանգամից նրան կջոկեր բազերի յերամի միջին և այն ժամանակ նա չեր աղատվի սուր ձիրաններից:

Այժմ բազեն կուշտ եր: Ամեն մի թոշուն համարձակ կարող ե մոտենալ նրան և նա նրան ձեռք չի տա:

Նա այնպիսի ավագակ չե, ինչպես ճուռակը՝ վոր սպանում ե բոլորին, ում վոր միայն կարող ե, մինչև անդամ կուշտ ժամանակ: Բազեյին միայն քաղցն ե հարկադրում սպաներ

Բազերը մեկը մյուսի հետևից, սիրտ առնելով, սկսեցին դուրս լողալ իրենց պատապարաններից: Սապսան բազեն նրանց տեսնում եր, բայց չեր շարժվում: Նրա լայնակուրծք ամուր մարմինը կարծես կպել եր քարից: Յերբ նա չեր շարժվում, նրան համարյա չեր կարելի տարբերել շըշապատող քարերից և հողի կոշտերից:

Նրանց գույնին զարմանալի կերպով հարմարվում ել նրա թերթաքարի դարչնագույն մեջքը, թևերի սև փետուրները և գորշշերտավոր կուրծքը, վորը և պոչը: Միայն սպիտակ բուկը զատվում եր սպիտակավուն քարի ակես դարչնագույն հողի վրա:

Յերբ բոլոր բազերը հավաքվեցին յերամի, նրանք միանգամից, ինչպես ազգանահանով, վեր կացան ջրից և շեշտակի բարձրանալով վերև, աղմուկով սլացան սապսանի գլխավերենով:

Գլուխը կողքի թեքած, սապսանը հանգիստ նայեց նրանց հետեւից: Այդ նրա բազերի յերամն եր: Արդեն մի քանի որ ե, վոր թոշում ե նրա հետեւից, գուրս կորդելով իր ճաշի համար այս կամ այն թոշունին: Նա, ինչպես և բազերը, հիմա անցնում է չլուսիս՝ իրեն հայրենիքը: Յերբ նա կուշտ ե՝ յերամն առաջ և թողնում: Բայց հենց վոր քաղցը նրան հիշեցնում ե, վոր նրա ստամոքսը դատարկ ե, սապսանն արգությամբ հասնում ե իր բարձերի յերամին:

Այսպիսով նա ճանապարհին յերեք առանց կերակուր չի մնում: Այժմ ել նա հանգիստ նայում եր հեռացող յերամի հետեւից, աշխատելով մտքումը պահել նրա թոփչքի ուղղությունը:

Հանկարծ նրա աչքերուն փայլեց գիշատիչ հուրը: Նա միանգամից ամբողջովին ձգվեց և ուշաբռությունը լարեց: Իր բազերի միջև նա տեսավ վայրի սագին: Այդ արժեքավոր վորս եր:

Այդ ըսպելին վոչինչ չկասկածող սագը վաստակեց անողոք, անգութ հալածող, վորից նրան փրկել չեն կարող վաչ արագաշարժ թևերը, վոչ ամուր կտուցը:

Յ Ե Ր Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Վրա հասավ տաք, պարզ գիշեր: Զյունը հալվում եր: Գունատ լերկնքում հագիս նշմարելի կերպով առկածում ելին նոսր աստղերը: Յածում՝ զյուղում, մեկը մյուսի հետեւից հանգչում ելին աղոտ, կարմիր ճրագները:

Շուրջը խաղաղ եր: Մթությունից գալիս եր միայն մեղմ կարկաչունը՝ հայտնի չե թե ուր վազող առվակների:

Ահա բարձունքում լալեց մոտեցող բազերի անտեսանելի յերամի թևերի շաչումը:

Տ Կ Ծ Հ Ա Պ Ա Վ Ա Ր Բ Ի Ն



Ուղիղ գլուղի վրա յերկնքից հնչեց վայրի սագի զիւ փողա-
լին կընչըւնը:

Գլուղի ծալրամասում տնալին սագերն իրար անցան: Ուժեղ
թափահարեցին թեւերը և ձախ տվին զիւ ու թախծու: Գիշերալին
թուլլ կիսալուսի մեջ, նրանց տեսանելի թվաց դեպի հեռուն անց-
նող յերամի անորոշ ստվերը:

Մի քիչ ժամանակից հետո, նույն անբռնելի ստվերը սահեց
ուրիշ գլուղի վրալից, հետո յերրորդի: Յեվ ամեն տեղ վայրի սա-
գի փողալին ձայնը արթնացնում և հուզում եր գլուղական սագերին:

Ազատությունը վաղուց մոռացած տնալին թռչունները, խը-
ռովաճույզ թափով ոդում թափահարում ելին թեւերը:

Բայց թռչելուց հետ սովորած, ալժմ նրանց համար անպետք
թեւերը նրանց չելին բարձրացնում գետնից, չելին կարող ոգնել
գերությունից ազատվելու: Յեվ գիշերալին խաղաղութեան մեջ
յերկար ժամանակ չեր լուսմ նրանց ճիշը՝ լի անզոր հուսահատու-
թեամբ:

Իսկ բազեն՝ իր ազատությամբ բախտավոր, արագ, վստահ
թափահարումով սլանում եր ավելի և ավելի առաջ: Նա սլանում
եր վտանգների, գուցե և մահվան հանդեպ: Բայց առջեւում նրան
սպասում եր ծովը: Մեծ ճանապարհը ծովալին և նրա վրա — ընդ-
ամպլա թափառականների աղմկարար յերամներն ու մենակ թո-
ղած ընկերոջ հանդիպումը:

Գիշերվա վերջին բագերի յերամն իջավ հալված ջրով լի ան-
տառի ճահիճը:

Այստեղ մութն եր և խաղաղ: Քամին այստեղ չեր թափանցում:
Հարթ ու ջուրը փայլում եր, արտացոլելով լուսացող յերկինքը:
Մուալլ յեղեւիները խիտ շարքով բոլորակի պատել ելին ճահիճը:
Նրանց փռված ճյուղերը վրանաձկ կախված ելին հենց ջրի վրա:

Մթությունը թռչուններին չեր վախեցնում. գիշերալին խա-
վարի մեջ նրանք վորոշում ելին բոլոր շրջապատող առարկաները:
Քանի ամեն ինչ անշարժ եր մնում, թռչունները կարող ելին հան-

գիստ լինել: Նրանց տեսողությունից չեր խուսափում վոչ մի ըստ-
վեր: Թշնամիները չելին կարող առանց նկատվելու գաղտագողի
մոտենալ նրանց:

Անտառում մեռելալին լուսթյուն եր տիրում: Միայն յերբեմն-
յերբեմն թռչունների լարված լսողությունը խշաշոց եր բռնում
ինչ վոր տեղից, մութ թավուտի խորքից: Բաղերից մեկն խկուն
դվյալում եր, և ամբողջ յերամը մի ակնթարթում պարզում եր վե-
րը, ականջ եր դնում և շուրջը նայում: Բայց խշաշոցն այլս չեր
կրկնվում, թռչունները հանգստանում ելին և նորից սկսում ելին
ուտեր նորից գիշերալին խաղաղության մեջ լսվում եր միայն ջրի
մեջ սուզվող մարմինների հանդարտ ծփունը: Յերամը շտապում
եր կշտանալ, քանի դեռ շրջապատում թափառող թշնամիները չեն
հայտնաբերել նրանց պատսպարանը:

Վայրի սագը սուզվում եր հենց ափի մոտ, խիտ յեղենու
թաթերի պաշտպանության տակ: Այստեղ նա իրեն ապահով եր
զգում. յեթե վորևէ գիշատիչ հարձակվեր բաղերի վրա, վոր լողում
ելին բաց ճահճի մեջտեղում, նա կարող եր ծլկվել:

Ճահճի հատակին բուսել ելին փաթաթվող յերկար ջրիմուռ-
ներ: Սագը շուտով զգաց, վոր վոտքը խճճվել ե նրանց մեջ: Նա
թափով առաջ նետվեց, բայց մետաղլա ողը ցավեցնելով խրվեց
նրա վոտքի մեջ: Ամուր ջրիմուռները բռնել ելին նրանք Սագին
թվաց, թե նորից կապված եւ:

Այդ ժամանակ թավուտում պարզորոշ վոստ ճոճուաց: Սագը
դադարեց վոտքը թափի տալուց և ամբողջ մարմնով կամաց դար-
ձակ դեպի ափը:

Ալեոր յեղենու խավարից շեշտակի նախում ելին նրան յեր-
կու վառվող անթարթ աչքեր:

Վայրի սագն ուզում եր աղաղակի, բայց ջղաճգումը սեղմեց
նրա կոկորդը: Սարսափից նրա ամբողջ մարմինը քարացավ: Բա-
վական ե, վոր մի շարժում անի, և անտեսանելի հրեշն ամբողջ
ծանրությամբ կընկնի նրա վրա ու կճխլի:

Վայրի սագն այլս ցավ չեր զգում վոտքի մեջ խրված ողից:
Նա չեր ել մտածում փախչել, Զեր կարողանում հայացքը հեռաց-
նել ալի իրեն թափանցող աչքերից:


Հանկարծ ինչ վոր բան ուժեղ հրեց նրա կողքը: Մի ակնթարթ
սագի աչքերը կտրվեցին այն աչքերից: Իրեն կողքին տեսավ մի
բադ, վոր թեռվ խփել եր նրան: Այդ նույն բողելին հանկարծ
նրանից լեբէսուղը չքացավ:

Յեկ սագն այնպիսի ուժով թափ տվեց իրեն աեղից, վոր նրա
վոտքը բռնող ջրիմուռները կտրտվեցին:

Բարձր ճշունով նա վազեց ջրի վրայով, ոգնելով իրեն թևե-
րով: Բաղերը վեր կացան ճահճից:

Հենց նույն ժամանակ թափուտից լսվեց աղվեսի չար հաջոցը:
Հաջոցը դարձավ վագագոց և ապա քրթմնջուն: Թոշունները լսե-
ցին ճյուղերի դադարող ճարճատյունն անտառում՝ հեռացող գիշա-
տիչի վոտքերի տակ: Աղվեսը գիտեր, վոր ահաբեկված լերամը կը-
նստի ճահճի մեջտեղում և այլս չի հաջողվի թոշուններին դարձ-
նակալել ափի մոտ:

Բաղերը և վայրի սագը թոշում ելին ջրի վրա: Նրանք դեռ
կուշտ չելին և չելին ուղում հեռանալ ալսաեղից:



Բայց շուրջը, մթության մեջ պահ մտած, շատ սարսափելի
թշնամիներ կային:

—Ուղունեւ—լսվեց հանկարծ չարագուշակ ճախն անտառի
խորքից:

Սահուն կերպով գեպի ջուրն իջնող լերամը միահամուռ կեր-
պով թափահարեց թեռները:

—Ուղունեւ, ուղունեւ, լսվեց պատասխանը մյուս կողմից:
Ցերամը բարձրացավ գեպի վեր և սլացավ անտառի վրայով:

—Ուղունեւ, ուղունեւ, այժմ բվեճները միմյանց ճախնակ-
ցում ելին ինչ վոր տեղ, նրանցից ցածր և այլևս սարսափելի չե-
լին լերամի համար:

Լուսանում եր: Գյուղերում արթնանում ելին մարդիկ:

Անցավ սահուն, անշտապ թուիչքի մի ժամ: Ծագող արևի ճա-
ռագալթները սահելով վարդագուն ամպերի վրայով, իջան ցած-
ր և վոսկեխաղ տվին հեռվում նշանարվող քաղաքի խաչերի և գմբեթ-
ների վրա:

Զ Ո Ր Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Այդ ժամանակ սապսանն արդեն հասնում եր իր բաղերի յե-
րամին: Մրրկանման արագ թռիչքը չդանդաղեցնելով, նա սլացավ
արթնացող գյուղերի վրայով: Տնալին սագերը նրա լերեալու ժա-
մանակ, վախից աղմկում ելին և ուժդին նետվում չարդախների
պաշտպանության տակ:

Սապսանը սլանում եր առաջ և առաջ: Ներքեռում վայրկենա-
բար լերեալու ելին գյուղեր, դաշտեր, պուրակներ: Վերջապես նա
սլացավ յեղենու մեծ անտառի վրայով: Ծառերից վեր, տեղ-տեղ
լերեալու ելին մասը թոշունների լերամիկներ, Բաղելի լերեալուն
պես, նրանք մի ակնթարթում վախուսատի ելին դիմում: Նրանք
ցըված նետվում ելին ցածր, վերև, կողքերի վրա—միայն թե հեռու
լինելին դաժան գիշատիչից:

Բայց սապսանը նրանց վրա ուշադրություն չեր դարձնում.
առջեռում նրան խոշոր վորս եր սպասում: Նա սլանում եր ավելի
ու ավելի արագ:

Արեւ դեռ ցած կանգնած եր հորիզոնի վրա, յերբ սապսանը
հեռվում քաղաք տեսավ:

Անինչ վայրի սագը, չզգալով իրեն վրա հասնող փորձանքը՝
դանդաղեցրեց թոխքը: Նա բարձրից զարմանքով դիտում եր իր
ներքեռում ծավալվող քաղաքը:

Մարդիկ դեռ քնած ելին աներում:

Քաղաքը մեռած եր թվում: Զանազան ուղղություններով նը-
րան կտրում ելին գորշ քարե միջնորմներ, ծածկված մուտ կարմիր
յերկաթով: Զանազան չափերի քառանկյունի և թեք վանդակիկներ
կիպ կպած ելին մեկը մլուսին: Նրանց արանքի յերկար, ուղիղ,
նեղ փողոցները հիշեցնում ելին առուների չոր հունը: Քաղաքի
մեջտեղում փայլում եր գետը, սեղմված ուղիղ գրանիտա ափերով:
Անտեղ, վորտեղ նա յերկու բաղուկի յերաժանվում, կողքերից
վեր ելին բարձրանում յերկու բարակ վոսկե ցցեր:

Առաջվա անշտապ թոխքով թուչող յերամի և սապսանի միջի
տարածությունն ամեն ըոպե փոքրանում եր: Բայց, վհչ բաղերը,
վհչ ել վայրի սագը, չելին նկատում հետապնդողին: Վայրի
սագի հայացքը կանգ առավ մի հսկայական տան կլոր վոսկա տա-
նիքի վրա: Արևի պայծառ լուսով վողողված վոսկին աչք եր ծակում:
Վայրի սագը տեսավ, ինչպես այդ տանիքի տակից դուրս պըր-
ծավ մի թուչուն և թուավ վերև: Շուտով կարելի յեր վորոշել բա-
զեցի մանգաղանման կեռ թևերը:

Բաղերից մեկը հուզված դվյագը և ամբողջ յերամն սկսեց
վեր բարձրանար: Բազեն համարյա ուղիղ գծով սլանում եր դեպի
նրան: Այժմ փրկությունը կապված եր նրանից, թե՝ կարող ե
արդյոք յերամը թույլ չտալ բազեցին հասնել իրեն և բարձրություն
վերցնել՝ մեջքին հարվածելու համար:

Թուչունները լուռ ելին և լարում ելին իրենց ամբողջ ուժն
այդ ողալին պայքարում:

Ալսպես անցավ մի քանի տանջալից-յերկար ակնթարթներ:
Շնչառությունը դժվարանում եր ընդամալա բարձրության նոս-
րացած ողում:

Վայրի սագը սարսափով նկատում եր, վոր չնայած նրա բո-

լոր ջանքերին, բազեն ավելի լավ տեսանելի յեր դառնում, ավելի
մոտենում եր: Արյունը խփում եր նրա գլխում: Սիրտը ցավով բա-
րախում եր կրծքում:

Բազեն հանկարծ դադարեց բարձրանալուց: Մի ակնթարթ նա
անշարժ կախվեց ողում, հետ դարձավ և հանկարծ նետվեց մի
կողմի վրա:

Յերամն, ողովելով դործի՝ իրեն համար բախտավոր ընթացքից,
միահամուռ կերպով ուղիղ առաջ սլացավ: Մի վայրկան սագը
դեռևս տեսնում եր բազեյի արագ յերևացող և անհայտացրող թերը:
Նրան թվաց վոր բազեն սլանում ե իր արտացոլման հանդեղ ջրի
մեջ: Բայց հետեւալ վայրկանին բազեն և իր կրկնորդը անհայ-
տացան նրա աչքերից:

Այժմ վայրի սագն առաջ նայեց: Հրճվանքի ճիչ դռւրս թռավ
նրա կրծքից, ուղիղ նրա առաջ, առավոտյան արևի ճառագայթների
մեջ փայլելով՝ փռված եր ծովը:

Անտեղ տարածվում եր Մեծ ճանապարհը:

Յերը սապսանը բադերի յերամի մեջ նկատեց քաղաքի վրա
բարձր թուչող վայրի սագին, նա թոխքն ավելի արագացրեց: Նա
ժամանակ չուներ կողքերի վրա նայելու. նրա և յերամի միջի տա-
րածությունը, թերը ամեն մի թափահարման հետ, փոքրանում
եր: Հիմա սագին վերևից հարվածելու համար, պետք եր վեր բար-
ձրանար:

Յերամի վոչ մի թուչուն հետ չնայեց: Կնշանակի նրանք դեռ
չելին նկատել նրան: Բայց ինչու նրանք շարունակ վեր են բարձ-
րանում:

Սապսանը ցած նայեց: Անտեղ նրա հանդեպ բարձրանում եր
ուրիշ բազե: Մի վայրկան սապսանին թվաց, վոր իրը թե ջրի
մեջ իր արտացոլումն ե տեսնում, այնքան նման եր նրան դեմի
բազեն: Հետեւալ վայրկանին սապսանը հասկացավ, թե ինչու բա-
զերը վեր սլացան. մլուս բազեն ել հետամտում եր յերամին, բա-
զերը խուսափում ելին նրանից:

Մրցակիցն ել նկատեց սապսանին: Նա վերև թոշելիս կանդ առավ, կտրուկ կերպով շրջվեց տեղում և հանկարծ շեշտակի նետվեց սապսանի ճանապարհը կտրելու:

Այդ բաղեցին յերկու բաղեն ել միատեսակ բարձրության վրա էին: Յերկուսն ել միանգամից հայդի առան իրենց կովելու ուժերը:

Սապսանը արևածաղից սկսած անդադար հետապնդում եր յերամին և հոգնել եր: Բայց նա իր ախոյանից խոշոր եր:

Քաղաքից բարձրացած բաղեն նրանից փոքր եր հասակով, բայց թարմ ուժերի պաշար ուներ: Բարձր ռազմի ճշոցով — դիակ, դիակ — նա համարձակ հարձակվեց հակառակորդի վրա:

Այդ կատաղի ճիչը լսելով, սապսանն արիությունը կորցրեց — ախտես ճշում են բաղեները միայն իրենց շրջանում: Սապսանը հետ դարձավ և փախուստի դիմեց:

Դիշատիչ թոչուններն իրենց տիրապետություններն ունեն, վորտեղ նրանք իրենց ցեղի այլ թոչուններին թուլլ չեն տալիս վորս աներու: Այդ տիրապետություններն անտեսանելի ողալին շըրջաններ են, վորի մեջտեղում գտնվում ե դիշատիչի բունը: Տերը կարողանում ե պաշտպանել իր շըշանն ամեն տեսակի թշնամուց, նույնիսկ արձվից:

Քաղաքացին բաղեն հաղթական ճիչով սլացավ սապսանի հետեւից: Հետապնդումը շարունակվեց, մինչև սապսանը դուրս թռավ քաղաքի սահմաններից: Այստեղ նրան հալածողը հետ ընկավ և վերադարձավ տուն՝ վոսկը գմբեթի տուկ, վորտեղ առաջին անգամ նրան նկատեց վայրի սագը:

Այստեղ նա ապրում եր աղմկոտ, մարդաշատ քաղաքի մեջ: Հանդինության չափ համարձակ, ինչպես բոլոր բաղեները, նա համախ ճանկում եր աղամի կամ գորշ աղուավ ուղղակի անցորդների դիմավերեկին: Քաղաքացիք մինչև անդամ չելին կասկածում, վոր այդ դաժան դիշատիչն ապրում ե իրենց կողքին՝ մալրաքաղքում:

Նրանցից շատերը տեսել եին, ինչպես աղամիների յերամը, վախեցած բաղեցի հանկարծակի յերևալուց, աղմկով սլանում ելին

նրանց աչքի առաջ: Բայց նրանք չելին կռահում վերև նալել կամ ուղղակի չելին նկատում վոչ աղամիների հանկարծակի շփոթությունը, վոչ գիշատիչի արագ հարձակումը:

Յերկու բաղեցի հանդիպումը փրկեց վայրի սագի կյանքը: Սապսանը գլխապտույտ փախուստից հոգնած, հարկադրված եր իջնել քաղաքից դուրս առաջին պատահած պուրակում: Մինչդեռ նա այստեղ հանգստանում եր, բաղերի յերամը ծով հասավ և կորակ Մեծ ծովային ճանապարհի այլ թափառողների մէջ:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ւ Գ Գ Լ Ո Ւ Խ

Միշկան իր առաջ փոել եր մեծ քարտեզը: Նրա վրա գտավ վիտերսկ քաղաքը և մատիտով ընդգծեց:

Նա շատ մտատանջվում եր ազատ թողած վայրի սագի մասին: — «Լավ, — մտածում եր Միշկան: — Թող նա թոչի այնտեղ, վորաեղ նրան բռնել են»:

Նա ուղիղ գիծ քաշեց վիտերսկից մինչև Ֆիննական ծոցը, Լինինգրադից ձախ:

«Ճիշտ ե, նրան այնտեղից բերել են վակ զամբյուղի մեջ: Ե, ինչ անենք վոր, փոստալին աղամիներն ել են վակ զամբյուղներով տանում: Այսուամենախնիվ չե վոր նրանք գտնում են ճանապարհը դեպի իրենց աղամանոցը»:

«Իսկ հետո»

Միշկան մտասուղվեց:

«Ասում են վայրի սագերը բուն են դնում բոլորովին հյուսիսում: Նրանց ճանապարհը Լադոգալի լճերովն ե, այնուհետեւ մանր լճերով: Յեվ կթոչի հեռու սև անհատակը — նոր Յերկիրը: Նըսն ով պիտի բռնի այնտեղ: Այնտեղ մարդ ել հո—մեկ, յերկու և հաշիվը վերջացավ: Յեթե նրան վորեմ նենեց վորսորդ ել գնդակահարի, նա ինչ գիտի, թե ողի մասին Մոսկվա պիտի հաղորդի»:

— Հայրիկ, հե՛յ — ձայն տվեց հանկարծ Միշկան ամբողջ ուժով, — նենեցները գիտեն, վոր ողի մասին պիտի Մոսկվա հաղորդեն:

—ինչ ե՞ւ, —ձայն տվեց հալըն իր սենյակից, —ի՞նչ նեմեցներ,
ի՞նչ ող:

— Նեմեցներ չեմ ասում, ալ նենցներ, սամուեղներ՝ հին
ձեռվ. Յեթե մեր վայրի սագին վորհե նենց վորսորդ սպանի նոր
Յերկրում, գլխի կընկնի ողի մասին հաղորդի:

—Հա, այ թե ինչի մասին ես ասում: Եհ, շատ հնարավոր ե
վոր հաղորդի ել: Հյուսիսային վորսորդները շատ դիտունակ և հար-
ցասեր մարդիկ են: Ողբ վոտքին թռչունի մասին արագությամբ
լուր կտարածվի բոլոր բնակավայրերում: Իհարկե այդ մասին կի-
մանան և այնտեղի գիտական աշխատողները: Չե վոր այնտեղ, Նոր
Յերկրում, մենք ուղիղոկայան և այլ արդարի բաներ ունենք: Են-
տեղից ել իմաց կտան Մոսկվա:


—Գուցե ալզպես ել ե, —համաձայնվեց Միշկան: —Ի՞նչ լավ բան կլիներ Նոր Յերկրից տեղեկություն ստանալինք, թե ահա բարեռում ե ձեզ սպիտականակատ վալրի սագը:

Միշկան աչքերը քարտեղից բարձրացրեց և մտածկոտ նալից լուսամուտից։ Այստեղ նրա աչքերը միանդանից չովեցին վախից։ գուրուը ձյուն եր գալիս, իսկական կատաղի բուր եր։ Միշկան մտածում եր։

«Եհ, կնշանակի վերջ վայրի սագին։ Զմեռը յեկավ։ Ո՞ւր պիտի
գնա թոչունը։ Հո չի կարող վերադառնա իրեն բունը։»

Միշկան գնաց հոր մոտ և նրան ասաց իր լերկլուղի մասին։
Հայրը հավատացնում եր, վոր դեռ վոչինչ հալտնի չե, — գուցե-
այնտեղ, վորաեղ հիմա սագն ե, վոչ մի բուք ել չկա։ Գուցե այն-
տեղ գեղեցիկ լեղանակ ե։ Յեվ, վերջապես, հո բոլոր թաշունները
չեն վոչնչանում, լերք ճանապարհին նըանց բուք ե վրա հասնում։
Ինչ դատարկ բան ե՝ ամեն տեսակ սարսափներ լերեվակալութ


— Վհչ, — ասաց Միշկան, հաստատում կերպով, — յես գիտեմ.
մենք սխալի եցինք: Այնպես վաղ չեր կարելի բաց թողնել վարի
սագին: Պետք է սպասելինք իսկական տաքերն սկսվելուն: Նա մեզ
մոտ ընտելացել եր տաքին: Հիմա կվոչնչանա ցըտից:
Յեմ թափահանելո ձեռքու:



Գարնանը և աշնանը աղմուկ եւ տիբում Մեծ ծովալին ճանապարհին:

Տարին յերկու անգամ այդ ճանապարհով անցնում են թևավոր թափառականների սովար խմբերը: Տարին յերկու անգամ նրանք թռչելով պտտում են յերկրագնդի չորրորդ մասը՝ արևի ճառագալթների հետևից: Մեծ ճանապարհը մի ծալրով կոթնել եւ մռայլ չուտսխալին Սառուցյալ ովկիանոսին, մյուսով կորել եւ շոգ հասարակածի ծաղկափթիթ յերկրներում:

Վաղ գարնանը արևի տաք ճառագալթները սահում են ներքեւ յերկրագնդի լանջով; Կովում են հյուտսխալին յերկարատև ձմռան մթության հետ, ջարդում են սառուցյաները և ազատում ջրերը: Այդ ժամանակ ծովալին և առավնչա թռչունների անհամար յերամներ բարձրանում են հարավալին Յեվրոպալի և Աֆրիկայի տաք լճերից ու ծովերից: Անվերջ շարաններով, ամեն մեկն իր հերթին, իրենց շարքերով, նրանք թռչում են Աֆրիկայի և Պիրենեյան թերակղղութ ափերի յերկանությամբ, Բիսկայան ծոցով, նեղուցներով, չուտսխալին և Բալտիկ ծովերով:



Յերամների մի մասն աստիճանաբար սկսում է հետ ընկեր, թեքվում եւ Մեծ ճանապարհից, յայն փովում եւ չորս կողմի վրա և ընակություն հաստատում շրջակա լճերի, գետերի ափերին ու ճահճուտների վրա: Բայց շարունակ նոր և նոր յերամներ են գալիս հարավից: Այստեղ, վորտեղ Ֆիննական ծոցը խոր մտած եւ ցածաքի մեջ, նրանք բարձրանում են անտառից վեր և թռչում են համար-լա անընդհատ շղթայով մինչև սառը Սպիտակ ծովը և ավելի հեռու, Սառուցյալ ովկիանոսի ափի յերկարությամբ՝ մինչև նոր Յերկիրը: Այստեղ վերջին յերամները բաժանվում են գույգերի: Այստեղ նրանք բներ են շինում, հանում են փոքրիկ փափկափետուր ճուտերի:

Նրանք շտապում են, վորովինետև չուտսխում ամառը կարճ եւ չաղիկ իրանց ճուտերը հասունանում են և սովորում են թռչել թռչունները նորից յերամներով հավաքվում են հարավ թռչելու համար: Քաղցը վոր վրա յե համնում խավարի և ցրտի հետ, քշում են նրանց արևի հեռացող ճառագալթների հետևից: Գալիս եւ աշունը և թևավոր թափառականների ավելի սովար խմբերը ծածկում են Մեծ ծովալին ճանապարհը:

Յերկար ճանապարհը դժվարին եւ Բայց հարավի անհող կյանքն արագությամբ, վերականգնում եւ սպառված ույժերը: Աննկատելի կերպով անցնում եւ ամիս-ամսի հետևից: Հանկարծ անհանդատությունն ու հուզումը պատում եւ թռչուններին: Նրանք այլևս տեղում նստել չեն կարողանում:

Այստեղ, նրանց հալբենիքում, գարունն ակսվել եւ:

Յեվ ահա յերամ յերամի յետևից — առաջինը նրանք, վորոնք յեկել են վերջինը, վերջինները նրանք, վորոնք յեկել են առաջինը — թռչունները նորից ճանապարհ են ընկնում դեպի հեռու չուտսխար

Ֆիննական ծոցում սառուցյան արդեն հավում եւ: Վերջին սառուցյանդերը, վոր մասել ելին քարերի և ափերի մոտի ծանծաղուտների վրա, գետ ևս սպիտակին ելին տալիս ծովի գորշ փովածքի միջև: Նրանք ծառալում ելին վորակես ապաստարան անցնող յերամների հանգստի համար:

Հենց այդ սառցագնդերից մեկի վրա իջավ հոգնած վայրի սագը:

Նա հենց նոր եր բաժանվել իր ուղեկիցներից՝ բագերը մնացին ափի մոտ կերակրվելու, իսկ նա թռավ իր հարազատ քերամը գտնելու:

Այդ տեղը նրան լավ հայտնի էր. հենց այստեղ անցած աշ- նանը նա հեռացավ իր լեռամից, խճճվեց ձկնորսական ուռկանում և ընկավ վորսարդի ձեռքը:

Բայց այժմ շրջակալքում վոչ մի տեղ վալրի սագեր չելին լերևում:


Կես որ եր — հանգստի ժամանակը ճանապարհին: Միայն լեր- բեմն հեռվում անցնում եր թռչունների միայնակ լերամ, վորոնք շտապում ելին կերակրվելու:

Սառցադնդի վերել հետ ու առաջ ելին թռչում ճայերը: Նրան- ցից մեկը կամ մլուսը, թևերը մեջքի վրա ուղիղ բարձրացրած, ընկնում եր ալիքների մեջ: Փայլուն ջրակաթիների կայծերը մի ակնթարթ տեսողությունից ծածկում ելին սպիտակ թռչունին: Մի ակնթարթից հետո, արագ բարձրանալով ջրից, նորից թևերը թափա- հարում եր ողի մեջ: Նրա կտուցի մեջ փալում եր արծաթիա ձկնիկը:

Վալրի սագը ճայերի վրա վոչ մի ուշագրություն չեր դարձնում: Նա ուշադրությամբ նալում եր գորշ ալեծածանումին: Ուղիղ սառ- ցադնդի մոտ և ավելի հեռու, ծովում, մերթ լերկում, մերթ անհայ- տանում ելին ջրում ձուկ վորսող ջրառույզ բագերը: Ավելի հաճախ աչքի ելին ընկնում սպիտակակուրծք հողամազիկները, խոշոր սև մանեկարագերը և խալտաճամուկ ծովաբաղերը:

Ահա իբենից շատ հեռու, սառցադնդի և ափի արանքին, սագը նկատեց լերկու խոշոր թռչուն: Նրան թվաց, թե ալդ սագեր են: Արեկ ճառագալթների մեջ ջուրը փայլում եր պողպատի պես. աչքերը հոդնում ելին հեռուն նալելուց:

Վալրի սագն իսկուն իջավ ջուրը և լողաց դեպի ալդ թռչունները: Այժմ նա նրանց աչքից կորցրեց. նրա աչքերի առաջ բարձրանում ելին ալիքները և



խանդարում ելին նալել ծովի մակերեսն ի վեր:

Սասպես անցավ մի քանի ըոպե: Վերջապես նա նորից տեսավ նրանց արգեն հեռու սառցադնդից, վորտեղից դիտում եր նրանց: Հենց նույն ըոպելին լերկու թռչունները բարձրացրին մարմնի առաջին մասը և թափով սուզվեցին ջրի մեջ: Վալրի սագը նկատեց նրանցից մեկի սև բուկը և մեջքի թռնդ սպիտակ շերտերը:

Նա միանդամից ճանաչեց ծովալին խոշոր թռչուններ՝ սուզա- հավերին: Վալրի սագը հիմա ափից հեռու չեր: Այստեղ նրան սկսեցին հանդիպել զանազան բագեր: Ափի ծանծաղ ծոցիները լի ելին ալղմով: Բագերը նրանց մեջ առատ կերակուր ելին գտնում:

Նրանց առանձին տեսակներն առանձին խմբերով ելին լինում, մերթ մոտենալով, մերթ հեռանալով միմիանցից: Միայն փոքրիկ աշխուժ մրտիմները դես ուղեն ելին ընկնում նրանց արանքին և կպչում ալս կամ այն լերամին:

Այստեղ կալին զանազանագույն շիկագուլիս թռչուններ և տի- գաբաղեր, վորոնց մեջքը բաղմերանդած և նըբագուլն ալիքավոր շերտերով, իսկ լերկար սուր պոչն իրոք, տեղ ե հիշեցնում, և զըվ- ղըվաններ — հենց նրանց նման, վորոնց լերամի հետ այստեղ լեկավ վալրի սագը: Գուցե մինչև անգամ, նրա քիչ առաջվա ուղեկիցներն ել այստեղ ելին. զվարան բագերն այնքան շատ ելին, և նրանք բոլորն այնքան նման ելին իրար, վոր վալրի սագը նրանց մեջ չեր կարող ջուկել իր ծանոթներին:

Շըլպպոցով և ղվղվոցով, թռչուններն աշխատում ելին կշտա-

նալ, վորպեսզի նոր ուժերով յերեկոյան ճանապարհ ընկնեն: Հենց ջրի յերեսին, նրանց թևերի վրա, փոքրիկ հայելիների պես փայլ-կըտում ելին բազմերանդ փետուրները: Դվյանաների հայելիները շողջողում ելին մանուշակագուշն, տիգաբաղերինը – գորշագուշն և մրաիմներինը – կանաչագուշն:

Այդ մի գեղեցիկ տեսարան եր: Առանձնապես գեղեցիկ ելին արու բազերը, իրենց պայծառ զարնանային շքեղ հագուստներով: Բայց վայրի սազը նրանցով չեր հետաքրքրվում: Մենակության զգացումն ավելի և ավելի յեր տիրում նրան. այստեղ ել սագեր չկային:

Սովը նրան տանջում եր: Բագերի յերամների արանքին լողալով, նա սկսեց հատակից կեր հանել:

Շատ ժամանակ անցավ, մինչև նա կուշտ կերավ:

Աղատվելուց հետո, առաջին անգամը նա իրեն զգաց կուշտ և հանգստացած:

Կեսորվա հանգիստը Մեծ ճանապարհին վերջացավ:

Ծովի վրա ավելի հաճախ սկսեցին յերևալ գեղի հյուսիս թռչող յերամները: Ողը լցվում եր աղմուկով, սուլոցով և թերերի թափահարումով:

Անտառից դենը, ինչ վոր տեղ, կոկոռում ելին կոռնկները:

Ծովից լսվում եր հողմաղիկների մեծ յերամի բազմաձայն աղաղակը և ճայերի ծորուն հառաչանքները:


Վայրի սագը նոր ուժերով լողաց ծով՝ իրեն յերամը վորոնելու:

Յերեկոն վրա հասավ, և սագն առաջվա պես մենակ նստած եր սառցագնդի վրա՝ ծովի միջին:

Հիմա ուղիղ սագի և գլխավերեկից, և հեռվից, ամեն լոպե մելը մլուսի հետևից անցնում ելին յերամներ:

Բայց նա իզուր նրանց մեջ աչքերով վորոնում եր իրեն հարազատ յերամը: Սագերը գեռս չելին յերևում:

Արեն արդեն ծովս եր իջնում: Յեղանակն սկսում եր փչանալ: Յերկնքով դանդաղ դեպի վեր սողում եր մի մեծ սև ամպ:



Զրի վրայով անցնում ելին մառախուղի թեթև գորշ ամպիկներ: Նրանք ավելի և ավելի հաճախ փաթաթում ելին սառցագունդը և խոնավություն հաղորդում վայրի սագին:

Այն կողմից, ուր թռչում ելին անցնող յերամները, հնչեցին կարապների բարձր, փողալին կանչերը: Մի բոպեյից հետո նորից կրկնվեց նրանց աղաղակը: Յերեք հսկա թռչուն, արծաթանման փալով, թափահարում ելին ծանր թևերը և կոկիկ սահում ողի մեջ: Նրանց ուղիղ, յերկար վզերը ձգված ելին առաջ:

Կարապները վերադառնում ելին: Այդ վոչ մի լավ բան չեր նախագուշակում:

Մեծ սառցագունդը, վորտեղ նստած եր վայրի սագը, գրավեց կարապների ուշաղը թյունը: Լայն, սահուն շրջաններ անելով, ելին նույնպես դանդաղ շարժելով թևերը, նրանք իջան մինչև ջուրը: Վերջապես ծանրաշարժ կերպով ընկումվեցին ալիքների մեջ և միաժամանակ լողում ելին առաջ, անկարող լինելով միանդամից կանգ առնել: Այժմ նրանք վզերը վեր ելին պահում: Հպարտ ու վեհ

տեսքով, նրանք դիտում ելին ծովը: Հետո լեզրերից ջարդելով կիւսահալ սառուցը, մեկը մյուսի հետևից բարձրացան սառցագնդի վրա:

Մառախուղը շարունակ թանձրանում եր: Այլևս դեպի հյուսիս թռչող յերամներ չելին յերևում: Բաղերի անկարգ, խիտ խմբերը վերադառնում ելին կարապների հետքից: Հասնելով սառցագնդին, նրանք աղմուկով նստում ելին նրա շուրջը՝ ջրի վրա:

Այստեղ առջելին, ծովային ճանապարհին, դժբախտություն եր պատահել. անթափանցելի պատի պես մառախուղ եր պատել: Թանձը գորշ մեղով շրջապատված՝ թռչունները մոլորվում ելին ճանապարհից և, դիպչելով գորշ ժայռերին, ամբողջ յերամներով վոչնչանում ելին: Նրանք, վորոնք դեռևս չելին մոլորվել, շտապ հետ ելին դառնում:

Վայրի սագը չգիտեր, վոր իրեն հարազատ յերամն ել առջելին ե: Նա դեռ յերկար նստած եր, լարված նայում եր թանձրացող մթությանը և լարում եր լսողությունը, հուսալով վոր կլսի ծառ նոթ ձայները:

Վերադարձած յերամները պատրաստվում ելին գիշերելու: Վերջապես վայրի սագի աչքերն ել սկսեցին կպչել: Նա գլուխը դրեց թեր տակ ու քնեց:

Յ Ո Թ Ե Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Փափուկ թեր տակ տաք ե և հաճելի: Վայրի սագը խոր քնած եր: Քնի միջից նա լսում եր միայն թռչունների ձայների խուլ բվկոցը և ալիքների շողփունը սառցագնդին:

Յերազում նա մոռացավ իր մենակությունը: Նրան թվում եր վոր ինքն իր հարազատ յերամի մեջ ե: Նա մինչև անդամ լսում եր շուրջը սագերի թարունի բարձր խոսակցությունը:

Հանկարծ ուսին իջած մի ուժեղ հարված հարկադրեց սագին սթափվել: Նա արագությամբ հանեց գլուխը թեր տակից և բաց արավ աչքերը:

Առաջին ըոպելին վոչինչ չեր տեսնում: Շուրջը սև մեղ եր, կպչուն մառախուղ: Ալիքների աղմուկը խանգարում եր վորոշել ձայները:

Նոր հարվածը՝ այժմ ուղիղ կրծքին՝ քիչ մնաց վայր գցեր նրան: Այդ ժամանակ հենց գլխի մոտ բարձր ֆշուց լսվեց: — Ղոնդ՝ անբողջ ուժով աղաղակեց վայրի սագը:

Առաջից, հետևից և ամեն կողմից, մթության միջից նրա շուրջը լսվեցին նույնպիսի ձայներ:

— Ղոնդ-ղոնդ, ղոնդ՝ ղոնդ, կռավում ելին սագերը:

Այս արդեն յերազ չեր: Նա իրոք իր յերամի մեջն եր, վոր նրա քնած ժամանակ իջել եր սառցագնդի վրա: Նրա յերամը մառախուղի միջով գտել եր հետ դարձի մանապարհը:

Ծեր արու սագ առաջնորդը մթության մեջ գիշել եր վայրի սագին, և կտուցի հարվածներով ուղում եր դուրս անել նրան սառցագնդից, բայց հենց վոր վայրի սագը ձայն հանեց, նա ճանաչեց նրան և մի կողմ քաշվեց: Ուշադրությամբ նայելով, վայրի սագը տեսավ մոտը խիստ խմբված թարունը և արագ առաջ քայլեց: Թարունը բացվեց, ճանրա տվեց և նորից փակվեց նրա հետևից:

Առավոտյան դեմ մառախուղն սկսեց նոսրանալ: Պաղ, թեթև քամին ծովի յերեսով քշում եր նրա քըքըված փաթիլները:

Սպիտակաճակատ սագերի թարունը դեռևս նստած եր սառցագնդի վրա:

Այդ առավոտյան վայրի սագից բախտավոր թռչուն չկար ամբողջ Մեծ ճանապարհի վրա:

Նա անհոգ լողում եր սառցագնդի յեզրի մոտ և մեջքը հեղությամբ կորացնելով, կտուցով կարգավորում եր իր կրծքի փետուրները: Նրա կողքին լողում եր նրա արու սագը:

Այդ մտերի զույգ եր: Նրանք միասին ապրել ելին յերեք տարի և չելին անջատվել մինչև այն որը, յերբ վայրի սագը գերի ընկավ մարդկանց ձեռքը:

Այժմ բարեբախտ դիպվածն ոգնեց նրանց նորից իրար գտնելու:

Յերբ վայրի սագը լողալուց ձանձրացավ, նա դուրս յեկավ սառցագնդի վրա: Այստեղ ծովից դուրս յեկած արեի պայծառ լուսի տակ, արու սագը տեսավ նրա վոտքին լայն սպիտակ ողը: Նա իսկուն սկսեց կտցահարել նրան, ձգտելով աղատել

ընկերուհուն այդ անպետք իրից։ Բայց նա վոչինչ չեր կարող անել ամուր մետաղին։ Ողի սուր լեզրերը միայն վիրավորեցին նրա կտուցը և ցավ պատճառեցին վայրի սագին։

Այդ ժամանակ առաջնորդը հավաք փողհարեց։

Սագերն իսկույն խորվեցին և հանդարտվեցին։ Առաջնորդը կրկնեց ճիշը, դանդաղ բաց արեց թևերը և ծանր բարձրացավ ողի մեջ։ Թաքունը հետեւց նրան՝ թռիչքի ժամանակ դասավորվելով բռնթ անկյունի։

Առաջնորդը թռչում եր առաջից՝ չափով ճեղքելով ողը թե-վերով։ Նրա հետեւից գնում ելին ուրիշ ծեր սագեր։ Զահելները թռչում ելին լերամի պոչից։

Հասնելով ափին՝ թաքունն ավելի բարձրացավ։ Ներքեւում ան-տառ եր։ Սագերը հանգիստ դիտում ելին նրան և խոսակցում առանց շտապելու։

Յերբ առաջնորդը հոգնեց, ցածրացավ և իր գլխի վրայից լերա-մին առաջ թողնելով, սկսեց թռչել պոչից։ Նրա տեղը զրավեց ուրիշ ծեր սագ։ Այսպիսով լերամի շարքը չխախտվեց։

Վայրի սագը, վոր թռչում եր անկյունի կենտրոնում իր արուի հետեւից, նկատեց սապսանին, վոր նստած եր անտառափեշի մի չոր ծառի կատարին։

Տեսավ նրան և առաջնորդը։

Բայց ահեղ գիշատիչն այս անդամ չվախեցրեց վայրի սագին։ Առաջնորդը չարագացրեց թռիչքը և տագնապի աղդանշան չտվեց։ Ամբողջ թաքունի գեմ սապսանն անզոր եր։


Անտառի հետեւին՝ գլուղ լերեաց։

Առաջնորդը կուանչեց և թաքունը վեր բարձրացավ։

Ծղնոտե տանիքների վրա թեթև ծուխ եր վոլորվում։

Փողոցի միջով մի մարդ եր գնում։ Վայրի սագը ճանաչեց նրան, նա այն վորսորդն եր, վորն անցյալ աշնանը դուրս հանեց իրեն ուռկանից։

Գլխի վերել կուանչոց լսելով, վորսորդը գլուխը բարձրացրեց, արեից ճեռքով ծածկեց յերեսը և լերկար նախում եր հեռացող լե-



ըամի հետեւից: Նա տեսավ վոր թաքունը մի կողմ թողեց գյուղին
կից արոտատեղը, սկսեց ցածրանալ և իջավ դաշտերում:

Այն ժամանակ վորսորդը ձեռքով տրորեց լարումից հոգնած
վիզը, հետ դարձավ և շտապ մտավ գյուղի ծալրի հին խրճիթնե-
րից մեկը:

Թաքունը վեր յեկավ արոտատեղից դենը աշնանացան դաշտում:
Սագերը լայն ցրիվ էեկան բոլոր կողմերի վրա: Նրանք պոկում
ելին մատղաշ կանաչ ծիլերը:

Ամբողջ թաքունից միայն յերկու ծեր թոշուն մնացին անշարժ:—
Նրանք վզերը ձգած կանգնած ելին յերամի կողքերին և ամեն ըո-
պե դիտում ելին շուրջը:

Վայրի սագը և իր արուն արածում ելին աշնանացանը, պահակ
սագերից հեռու: Բայց հենց վոր լսվեց նախազգուշացնող ցածրա-
ձայն—զու-զու-զու-զու.—Նրանք յերկուսն ել, ինչպես և բոլոր մլուս
սագերը, մոռացան կերը և ականջները սրեցին:


Շուրջը նրանք վոչ մի կասկածելի բան չնկատեցին, միայն թե
գյուղի կողմից դանդաղ մի ձի յեր քաշ դալիս դեպի նրանց:

Ինչպես յերկում ե, նա կապը կտրել եր. նրա վզից թոկ եր
կախ ընկած: Բայց սագերը ձիուց չեն վախենում, յեթե նրա հետ
մարդ չկա:

Մոտերքում մարդ չկար: Վայրի սագը նորից սկսեց արածեր
բոլոր մնացածներն ել հանգստացան:

Պահակ սագը կոանչեց ավելի ուժեղ, Վայրի սագը տեսնում եր,
վոր նա նայում ե մոտեցող ձիուն, բայց վոչ մի կերպ չեր կարո-
ղանում հասկանալ, թե ինչու յե ձին նրան անհանգստացնում:
Այս անգամ սագերը բոլոր կողմերից սկսեցին խմբվել: Թաքունը
հավաքվեց և բոլոր թոշունները ձիուն ելին նալում: Հիմա սագն
ել անորոշ անհանգստություն զգաց: Քանի նա ավելի յեր նայում
ձիուն, այնքան ավելի ուժեղ եր պատում նրան զարմանքը: Առաջ
նա յերբեք վեց վոտնանի ձի չեր տեսել: Նա սկսում եր սարսափել:

Անա վերջապես պահակ սագերից մեկը լուռ վեր կացավ գետ-



նից, թռավ տարորինակ կենդանու մոտ և ոդում լայն շրջան արավ
նրա շուրջը:

Յերամը յերկար չսպասեց նրա վերադարձին դետքից: Զան-
ցած նույնիսկ տարածության կեսը մինչև ձին, սագն արագությամբ
հետ դարձավ ճշոցով և փախչելու ազդանշան տվեց:

Թաքունը կռնչաց, թարթեց թերերը և թռավ առաջնորդի հետե-
րից, շտապ շարքավորվելով թոշելիս:

Վորսորդը, վոր թագնված եր ձիու կողքին, հետ թռավ մի
կողմը և նշան բռնեց: Հեռացող թաքունի քամակից լսվեց կրակոցը:

Բայց թուչունները ժամանակին ելին նախազցուշացված Նրանք
արդեն հեռու ելին:

Վրդովված վորսորդը բռունցքը թափահարեց և բղավեց նրանց
հետեւից.

—Միևնույն ե, չեք ազատվի: Շան միջոցով կխաբեմ:

Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Գիշեր եր, յերբ վորսորդը ծովափ դուրս լեկավ անտառից:
Ուսից դուրս եր ցցված հրացանի յերկար փողը, իսկ նրա վոտքե-
րի մոտ վազում եր բրդոտ շնիկը:

Վորսորդը նայեց շուրջը: Նոսրացող կիսամթության մեջ յերե-
վում եր ծովը մտնող յերկար ցամաքալեզվի ավազոտ ափը:

Մոտիկ հանգիստ փայլում եր ծոցիկի ծանծաղ ջուրը: Սփից
քիչ հեռու փոված եր անցլալ աարվա յեղեգնի լայն և յերկար
թփուտը: Տիղմի հոտ եր փշում:

Վորսորդն արագ քայլեց ավազոտ ցամաքալեզվով: Շնիկը վա-
զեց նրա հետեւից:

Յեղեգնի մաջ հուզված դվրվացին քայլերի ձախից վախեցած
բաղերը և սուլեցին անտեսանելի թերերով: Վորսորդը նրանց վրա
ուշադրություն չդարձրեց: Նա նրանց համար չեր յեկել ալստեղ:
Հասնելով ցամաքալեզվի ուղիղ ծայրին, նա կանդ առավ, ուսից հա-
նեց հրացանը և գոտուց քանդեց հացի տոպլրակը: Հետո գետնին
զցեց տոպլրակը և զգուշաբար նրա վրա դրեց հրացանը: Շնիկն
խկույն նստեց իրերը պահպանելու:

Վորսորդը մոտերքում գտավ մի տախտակի կտոր և արագու-
թյամբ ցըեց նրանով ավազն իր շուրջը, փորեց վոչ շատ խոր փոս
և շրջապատեց նրան ավազի պատնեշով: Հետո կիտեց ծովի դուրս
շպրտած աղբ, փայտի կտորներ, ձյուղեր, չոր յեղեգ: Այս բոլորը
նա տնկեց ավազե պատնեշի վրա ցանկապատի պես, կողքերից և
վերեից ծածկեց չոր տիղմի կտորներով և ծածկեց ավազով, թող-
նելով մի կողմից դուրս գալու աեղ, իսկ մյուս յերեք կողմից՝ փոքր
ծակեր հրացանի համար: Թագստարանը պատրաստ եր:

Վորսորդը հրացաննու կապոցը վերցրեց, չորեքթաթ մտավ
իր դարանը և շվոցով կանչեց շնիկին: Հիմա ավազոտ ցամաքալեզվի
վրա ամենասուր աշքն անգամ չեր կարող հայտնաբերել, վո՞չ մար-
դուն, վո՞չ շանը:

Այն ինչ լույսն սկսեց արագությամբ բացվել: Թագստարանում
պառկած՝ վորսորդը տեսնում եր, ինչպես յերկար սպիտակ ամպի
ներքի ցածը յեղը ծովի վերեսում վառվեց վուկու նման, հետո
սկսեց վարդագուներ կարմրել և, վերջապես, բոցավառվեց ծիրա-
նիով: Ելի մի քանի ըովելից հետո ծովի հանգիստ, կոկ յերեսին,
հենց ամպի տակ, յերեաց աբեկ սկավառակի պայծառ կարմիր
ծալը:

Սփից փչեց թեթև քանի և չոր յեղեգը սոսափեց: Ծովից լսվեց
ճայերի զիւ հառաջանքը:


Թուչունների խոշոր յերամներն անցնում ելին հեռվում:

Իրեն թագստարանում փորի վրա պառկած՝ վորսորդը կարող
եր տեսնել միայն իր առջեւ: Այս պատճառով նա չնկատեց ինչ-
պես իր թիկունքում ընկած անտառից դուրս թուավ սապսանը:
Բազելի սրածալը թերերը յերեացին ողում և իսկույն ծածկեցին
սոճու ճյուղերի մեջ, վոր մենակ կանգնած եր ավազոտ ցամաքա-
լեզվի վրա:

Փետրավոր վորսորդն ել դարան մտավ իր վորսին հետամտե-
լու: Շուտով խոշոր թուչունների ինչ վոր յերամ նստեց ափից հե-
ռու սպիտակ սապցագնդերի վրա:

Ցամաքալեզվի վրա՝ թագստարանում աղմուկ լսվեց և իսկույն
սողանցքից դուրս թուավ բրդոտ շնիկը: Նա ուզրւմ եր նստի ավա-
զի վրա, բայց թագստարանից նրա քթի առջեւից թուավ մի պա-
տառ սկ հաց: Շնիկն ընկալ նրա հետեւից: Հազիվ նա ճանկեց և
կուլ տվեց նրան, վոր հացի նոր պնատու դուրս թուավ դարանից
և ընկալ ավազի վրա, նրանից մի քանի քայլ: հեռու: Շնիկը
նորից վազեց վերցնելու:

Թագստարանից դուրս թուչող սկ հացի գնդակիկները հեռվից
չեր կարելի նկատել: Այդ պատճառով, ծովից շանը դիտող թուչուն-
ներին անհասկանալի յեր մնում ինչու նա ավազի վրա դես ու դեն
ե վազվում:



Սառցագնդի վրա նստած թուչուններից մեկն իջավ ջուրը և լողաց դեպի ափ։ Նա շարունակ շուռ եր տալիս գլուխը և հետաքրքրութիւնը դիտում վազվզող շնիկին։

Ափից շուտով կարելի յեր ջոկել նրա փետրավորման գորշ գույնը, ջրից բարձր պահած պոչը և մեկնած վիզը։

Հացի պատառներն անդադար թոչում ելին թաղստարանից զանազան կողմերի վրա, և քաղցած շնիկն առաջիւ նման ափով վազում եր նրանց հետեւց։ Թագստոցի ծակերից մեկի մեջ զգուշութիւնը մտավ հրացանի փողի ծայրը։ Բայց թոչունն ալդ չնկատեց, վորովհետև ամբողջ ուշադրութիւնը գրավել եր շնիկը։ Հրացանի ծայրը դանդաղ ուղղվեց նրա կրծքին։

Ալդ ըոպելին նա հեռու յեր վորսորդից, բայց սա արդեն տեսնում եր նրա ճակատի պալծառ - սպիտակ կիսալուսինը։ Ալդ վայ-

ըի սագն եր, Հետաքրքրութիւնը զգույշ թոչունին հարկադրեց մոռանալ վտանգը։ Սագն ավելի և ավելի յեր հեռանում յերամից և ընդառաջում իր կորստին։ Նրա արուն այդ ժամանակ քնած եր սառցագնդի վրա։

Հրացանի ծայրն սկսեց դառնալ շարունակ մնալով ուղղված դեպի նրան։ Արեի ճառագայթները պայծառ պսպղացին պողպատի հարթ մակերեսին։ Ալդ կասկածելի փայլը վայրի սագի աչքովն ընկալ։

Յերկուղը հաղթեց հետաքրքրութիւնը։ Նա խկուն բարձրացավ ջրից և հետ թուալ դեպի յերամը։

Վորսորդը զայրութիւց բարձր հայույն վորսը նորից դուրս պլծավ նրա ձեռքից. վայրի սագին գնդակ չեր հասնի։

Հենց նույն ըոպելին սապսանն իրեն դարանից կալծակի պես հարձակվեց նրա վրա։

Սարսափելի հարվածը մեջքին, քիչ եր մնում շուռ տա վայրի սագին։ Բազելի սուր ճիրանները խոր թաղվեցին նրա մարմնի մեջ։ Արլունը ցայտեց վերքերից։ Ցավից և սարսափից աչքերը մըթնեցին։

Ընկնելիս նա լայն փուեց իր թերը և գլուխն առաջ մեկնեց։ Ալդ մի վալրկան վրկեց նրան մահից։ Սապսանը չկարողացավ նրան կտուցի ուժեղ հարվածով վերջացնել։ Նա հետը ցած պիտի իջներ ջուրը, վորպեսզի անտեղ վերջացներ նրան։

Հանկարծ ափին կըակ փայլեց։ Գոռաց խլացնող կըակոցը։ Միքանի սաժենի վրա վայր թափվող կոտորակը կլկաց ջրի մեջ։

Վախեցած սապսանը բաց թողեց վայրի սագին, թուավ վերև և արագութիւնը անհալուացավ հեռվում։ Սագն անկենդան ընկըզմաց վեց ջրի մեջ։

Հետ-հետ գնալով, վորսորդը դուրս սողաց թագստարանից։ Նա շտապ հանեց կոշիկները, վոտի փաթաթանները, շալվարը։ Միան շապկով նա վազեց դեպի ծովը։

Սառը ջուրը վառեց նրա վոտքերը, բայց նա արագութիւնը

անցավ նրա միջով մոտ հարյուր քայլը, վոր բաժանում եր նրան
արյունաքամ յեղող սագից:

Յերբ վորսորդը մոտեցավ նրան, նա անշարժ պառկած եր ջրի
յերեսին: Նրա ամբողջ մեջքը արյունի մեջ եր: Վորսորդը բռնեց
սագի թևից, քաշ տվեց ափը և գցեց ուրախությունից հաջող շնի-
կի առաջ:

Վորսորդությունը վերջացավ: Վալրի սագի հարազատ յերամը,
վոր հանգստանում եր սառցագնդի վրա, կրակոցից վախեցած՝
թռավ գնաց:

Այժմ նա Մեծ ճանապարհին եր, շատ հեռու:

Ի ՞ ն ՞ Ե ՞ Ռ ՞ Ր ՞ Դ ՞ Գ ՞ Լ ՞ Ո ՞ Ւ ՞ Խ

— ԴԵհ, շնիկ, պահպանիր մեր գուշքը, իսկ յես վազեմ անտառ
ցախի, — ասում եր վորսորդը շնիկին, — անտեր ջրումը սառա: Կրակ
անենք տաքանանք:


Նա հագաւի կոշիկները, ձեռքը մեկնեց սագին, վոր դնի հրացանի
մոտ, վորտեղ նստած եր շնիկը:

Մեկ ել նրա աչքն ընկավ ողին, վոր սպիտակին եր տալիս
թռչունի թաթի վրա:

— Տես ե, սազը նշան արած ե — զարմացած ասաց նա, զննե-
լով ողը. — ողի վրա յել տառեր ու թվանշաններ ե գրված:

— Այ քեզ, փորձանք — ավելացրեց նա մի քիչ մտածելուց
հետո, շփոթված նալելով շնիկին, հիմա ինչ անենք: Պյուղում
կիմանան և տերն ել դուրս կցա, կասի՝ իմ ընտանի սաղն ես
սպանել: Աբա, մի փողերը վճարի: Չե, կաց, ես չեղավ: Ողը կհա-
նեմ վոտիցը և ծովը կզցեմ, վոր իզն ու թողը կորցնեմ: Իսկ առանց
ողի տերն իսկի չի յել ճանաչի, իսկական վալրի սագ ե: Անցլալ
տարի աշնանը, այստեղ ափի մոտ, ձկնորսի ուռկանից հենց ար-
պիսի մի սպիտակաճակատ հանեցի. Լենինգրադում նրան լավ դին
տվին:

Վորսորդը մտասուզվեց: Նա անդրագետ եր, ողի մակագրու-
թյունը չեր կարող կարգաւ, բայց հետաքրքրութունը նրան տան-
ջում եր: Իսկ ցուց տալ գրագետ հարեաններին՝ նա վախենում եր:



— Շտապելու բան չկա — վճռեց նա վերջապես. — դեռ կտա-
քանամ և հետո կվորոշեմ ինչ անեմ:

Վորսորդը վալրի սագին դրեց հրացանի և կապոցի կողքին,
կանչեց շնիկին և մեկ ել հրամայեց լավ պահպանել գուշքը:

— Բայց, տես հա — ավելացրեց նա հեռանալիս — մտքովդ
չանցկացնես վարսի համը տեսներ:

Շունը վոր սովոր եր տիրոջ գուշքը պահելու, նստեց
իրերի գիմացը:

Կապոցից հացի հրապուրիչ հոտ եր գալիս, իսկ թռչունից
վորսի մսի: Բայց համեղ պատառներին ձեռք տալ չեր կարելի: Պետք
ե համբերությամբ սպասեր, մինչեւ տերը գար: Նա չի մոռա-
նա իրեն կերակրել՝ եսոր նո ուրախ ե: Յերկի նրան լավ պատառ
կհասնի: Շնիկը բավականությունից մինչև անդամ կկոցեց աչքե-
րը՝ նախազգալով պարզեց իր համբերատարության համար:

Խշուց լսվեց այստեղից, վորտեղ իրերն ելին:

Շնիկն աչքերը բաց արեց և քարացավ զարմանքից։ Նրա-
նից յերեք քայլի վրա կանգնած եր կենդանացած վայրի սագը։

Մի ակնթարթ թոշունն ու շունը լուռ նայում ելին իրար։
Հետո շնիկը հաֆ արավ և քաջությամբ հարձակվեց սագի վրա։
Պաշտպանվելով թոշունը թևով խփեց շանը։ Հարվածն այնքան
ուժեղ եր և այնպես վարպետորեն դիպավ կենդանու զգալուն քթի
ծալրին, վոր շնիկը գլորվեց։

Անսպասելի ցավից շնիկը կորցրեց գիտակցությունը։ Սագն
ել կողքի վրա ընկավ, չկշռելով իր հարվածի ուժը։ Բայց իսկույն
վոտքի կանգնեց և կաղալով արագությամբ գնաց դեպի ջուրը։

Սապսանի ճիրանների վերքը մահացու չեր Յերբ վայրի սագը
տեսավ ծովով իրեն մոտեցող մարդուն, նա այնքան թույլ եր
արլունաքամությունից, վոր չեր կարող վոչ վերե թոշել, վոչ ջրի
տակ սուզվել։ Նրան մնում եր մեռած ձևանալ։ Այդ փրկարար մի-
ջոցին են դիմում վայրի սագերը, յերբ նրանք կորստից փրկվելու
ուրիշ միջոց չունեն։ Խորամանկ հնարքը լիովին հաջողվեց։ Յեն-
թաղբելով վոր թոշունն արդեն մեռած ե, վորսորդը չվերջացրեց
նրան։ Ավագի վրա պառկած ժամանակ վայրի սագը ուժերը
հավաքեց։

Այժմ թեկի հաջող հարվածը բաց արեց նրա աղատության ճա-
նապարհը։

Համանելով ափին, նա ջուրն ընկավ և շուտով անհայտացավ
յեղեգնի խիտ թփուտի մեջ։


Վորսորդը վերադարձավ թագստարան և մի մեծ խտիտ ցախ
բերեց։

Շունը տեղից չշարժվեց նրան ընդառաջելու։ Վորսորդը նրան
հրեց վոտքով, կարծելով թե քնած ե։

Շնիկն անվստահ վոտքի լելավ, կողքից կողք որորվելով մի
քիչ կանգնեց, և հանկարծ բարակ և տխուր վոռնաց։

— Ի՞նչ ե պատահել — զարմացավ վորսորդը։ — Յնդել ես, ի՞նչ ե։

Մեկ ել նաև իրերին և նկատեց, վոր հրացանի մոտ սագը
չկա։ Մոտերքում հարթ ավագի վրա նա վոչ մի տեղ յերկում։



— Իսկ սագն ի՞նչ յեղավ — ահեղ ձայնով բղավեց նա շան վրա։
Բայց նա մեղավորի պես միայն շարժեց պոչը և ավելի տխուր
կաղկանձեց։

— Չայնդ, անիծված — գոչեց վորսորդը։ — Ի՞նչ ես վոռնում,
վոնց վոր մեռելի վրա։

Իսկ իր մեջքը յերկուղից սարսուաց։ Բոլոր հին վորսորդների
պես՝ նա սնոտիապաշտ եր։ Նրա մտքով ամենավալրենի մտքեր
անցան։

— Սագը հասարակ չեր, ողով... Քիչ եր մնում շունը սատկեր...
Զքվեց քավթառը. խաչի զորությունը մեզ ոգնական ըլի...»

Նա շտապ վերցրեց հրացանն ու կալոցը և արագ քայլեց պեպի
անտառ։ Շնիկը, պոչը քաշած, քարշ յեկավ նրա հետեկց։

Յեղեգների մեջ թագնված վայրի սագը տեսնում եր, ինչպես
նրա թշնամիները ծածկվեցին ծառերի հետեկն։

Շովից նրան հասավ հեռավոր կոչող ճիչ։ Նա ճանաչեց արու
սագի ձախը։

Ճիչը կըկնվեց մոտիկից։ Վայրի սագն ուզում եր թոշի արու
սագին ընդառաջ, բայց թուլացած թերը ոդ չբարձրացրին նրան։

Կրծքից դուրս թռավ ցավի և հուսահասության ճիչ։ Նրա ուժերը վերջնականապես սպառված ելին։

Ավազոտ ցամաքալեզվից լեկավ պատասխան-կռանչոցը։ Շուտով ափի վերկին լերեաց արու սագը։ Նա հետ եր մնացել լերամից, իրեն անհայտացած ընկերուհուն դանելու համար։

Նա նորից զիլ և ուրախ ճշած, բայց պատասխան չստացավ։ Յեղեգնի վրա լայն շրջան կատարելով, նա ճշաց ելի և ելի։ Պատասխան ելի չկար։

Այն ժամանակ հետ թռավ ծովը և այստեղ իջավ ջուրը։ Նա չեր ուզում մենակ թռչել հասնել լերամին, առանց իր ընկերուհուն։

Տ Ա Ս Ե Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Անցնում ելին որեր որերի հետեւից։ Թռչուններն արագ թռչում ելին Մեծ ծովային ճանապարհով։ Սապսանը վաղուց թռել եր հյուսիս։ Այժմ նա ել չեր հեռանում Մեծ ճանապարհից և այստեղ լերեք առանց կերակուր չեր մնում։ Վայրի սագի հարազատ լերամն արդեն հասավ իրեն հայրենիքը։ Մի զույգ միայն պակասում եր թաբունում։

Ցամաքալեզվից դենը, ծոցիկում, վորտեղ այդ զույգը հետ մնաց նրանից՝ յեղեգը կանաչեց։ Վաղուց չքացել, հալվել ելին ծովի վերջին սառցագնդերը։ Ափը ծածկվել եր նոր խոտով, ափի ծառերը պատած ելին թեթև կանաչավուն մառախուղով։

Բազմաթիվ չվող թռչունների հանգստի համար ծոցիկը վորպես ապաստան եր ծառայում։ Այստեղ, վորպես մեծ ճանապարհի հյուրասեր ճաշատանը, հոգնած ողային ճանապարհորդները հանգըտանում և ուտելիքով ամրապնդում ելին իրենց ուժերը։

Թռան-անցան կարապների և սաղերի վերջին լերամները։ Բաղերն ել սկսեցին սակավ լերեալ ծոցիկում։ Այժմ ծովային ճաշատունը գալիս ելին նրանց փոխարինելու ավելի և ավելի հաճախ ուրիշ հյուրեր։ գալիս ելին լերկարավոտ և լերկարակտուց կացարները։ Նրանք ձգվում ելին ծովափի վերեսով։ Նրանց թռիչքը հաճախ ընդհատվում եր այսպիսի կերով առատ և անվտանգ ապաւտաններում։

Բայց այդ ծոցիկում նրանք լերկար չելին մնում։ Սա պատճառ ուներ։

Ծովային մեծ սպիտակապոչ արծիվը ամեն որ հայտնվում եր այստեղ անտառից։ Շատ ուշ-ուշ թափահարելով թևերը, նա բարձրունքով լողում – անցնում եր ծոցիկի վրայով և հեռանում դեպի բաց ծովը։

Այնտեղ, մեծ խորությունից, սպիտակապոչը խոշոր ձուկ եր բռնում։ Թռչուններին նա ձեռք եր տալիս հազվագյուտ դեպքերում։

Այնուամենայնիվ բոլոր ծովային թռչունները լավ գիտելին, վոր նա առիթը բաց չի թողնի ճանկել իրենցից մեկն ու մեկին նախաճաշի համար, իեթե ժամանակին չկատեն նրա մոտենալը։ Այդ պատճառով, հենց վոր սպիտակապոչը լերկում եր հեռվում, նրանք յըիկ ելին գալիս բոլոր կողմերի վրա։

Չուկ բռնելով, արծիվը հետ եր թռչում անտառ, ուր նրա բռնն եր, գցում եր վորսը ձվերի վրա նստած եգին և նորից ուղեղորդում եր դեպի ծով։


Միևնույն ճանապարհով, այնպես նա հետ ու առաջ եր թռչում որական մի քանի անգամ։ Յեկ ամեն անգամ, իերբ նա լերեալ եր, կացարների լերամները շտապով հեռանում ելին ծոցիկից։

Բայց միայն սպիտակապոչը չեր վրդովում նրանց հանդիսար։ Հաճախ յեղեգնի թփուտից անսպասելի կերպով հալտնվում եր մի մեծ գորշ թռչուն։ Նա աղմուկով ընկնում եր ջուրը և լողում եր դեպի ափը։

Արդեն արծվից վախեցած լերկարակտուց թռչունները վեր ելին թռչում տիղմից, և ողը թնդացնում ելին տագնապալից ծրագրոցով ու սուլոցով։

Սակայն նրանք շուտով ճանաչում ելին, վոր խոշոր սարսափելի թռչունը, խաղաղ սպիտակաճակատ սագ ե։ Նրանց լերկուղըն անցնում եր, նրանք նորից նստում ելին տիղմի վրա և վազվեզում ելին, ամբողջ մարմնով որորվելով իրենց բարձր, բարակ վոտքերի վրա։

Արու սագը, վոր կամքի հակառակ, միայն իրեն տեսքով



վախեցնում եր նրանց, սկսում եր լողալ ծոցիկի ծանծաղ ջրում:
Նա ել շատ համեղ կերակուր եր գտնում ալստեղ:

Յերբ կշտանում եր, հետ եր գնում յեղեգնուտը, վորտեղ նրան
սպասում եր վերքերը լավացող վայրի սագը: Նա զտավ նրան
յեղեգների մեջ այն որվա յերեկոյան, յերբ նա թագնվել եր այն-
տեղ վորսորդից և նրա շնիկից: Այն ժամանակից նա նրանից վոչ
մի տեղ չեր հեռանում:

Յերկու ալդպիսի աչքի ընկնող թոշունների համար, անվտանգ
չեր յեղեգների մեջ ապրելը: Բայց վալրի սագի մի թեր մնասել եր
բազեն, նա դեռևս չեր կարող թոշել և շատ թուլլ եր: Ուստի նրա
հավատարիմ արու սագը հարկադրված եր բաժանել նրա հետ սպի-
տակապոչի աչքին ընկնելու վտանգը, յերբ նա անցնում եր ծոցի-
կի վերեկից:

Վերջապես յեկավ որը, յերբ վալրի սագը վստահացավ իր հա-
վատարիմ արուի ուղեկցությանը թողնել յեղեգների ապաստանը՝
ծոցիկի ափին տիղմով կերակրվելու համար:

Այդ որն այնտեղ առանձնապես շատ ելին զանազան կտցալ-

ներ: Ափի մոտիկ ամբողջ տիղմը զարդարված էր նրանց բարակ,
ուղիղ մատների հետքերի խաչիկներով:

Ափի խոտի մեջ հանդիսավոր կերպով շրջում ելին բարձր վոտ-
նացուպ—վոտքերով, խոշոր մանգաղակտուցները: Զըի մոտ, դեղին
ավագի վրայով, արագ և աննկատելի, տեղից տեղ ելին վազում
գեղնավուն քարադրաները, ոև վողկապները վզերին՝ նստած ելին
կարմրաքիթ և կարմրավոտք խալտաբղետ կտցար կաչաղակները:
Տիղմի բարակ շերտի վրա, ամեն ըոպե մինչև ճակատը նրա մեջ
թաղելով իրենց թուլլ կտուցիկները, հետ ու առաջ ելին վազ-
վզում թեթև կտցար-ճնճղուկները և սևաքչիկները:

Բայց սագերը յերկար չելին մնում նրանց հասարակության
մեջ: Հենց վոր վալրի սագը կշտացավ, արուն լողաց դեպի ափ:
Նա ամեն ըոպե հետ եր նալում ընկերուհուն և հանդարտ կուն-
չոցով կանչում եր. իրեն հետևից: Շուտով յերկուսն ել ափ դուրս
յեկան, անցան անտառից իրենց բաժանող տարածությունը և ան-
հալտացան ծառերի հետևին:

Այդ որվանից սագերն ալլս չելին յերկում ծոցիկում:

Մեծ ծովալին ճանապարհի վրա թոխքը վերջանում եր:
Կտցարները թոչում-անցնում ելին շարունակ ավելի փոքրա-
թիվ յերամիկներով և, վերջապես բոլորովին դադարեցին, յերեալ
ափին:

Զըահավը վերջինը յեկավ ծոցիկը:

Զըահավը թոշել չի սիրում: Նա կարիք ել չունի թևերով բար-
ձրանալու և վտանգի յենթաբեկու իրեն ողում: Նա կարողանում
և արագ վագել, ճարպիկորեն թագնվել խոտի մեջ:

Նրա ճարմինը խիստ սեղմված է կողքերից, վոտքերը շատ հետ
են դասավորված, և այդ ողնում է ջըահավին անցնել խոտի ցո-
ղունների միջով՝ առանց նրանց դիպչելու: Նա լորի չափ եւ:

Զըահավը ձմեռել եր Աֆրիկայում: Շատ ժամանակ անցավ,
մինչև ձմեռելու տեղից նա հասավ մինչև Ֆիննական ծոցը: Նա
ուշ ել ճանապարհ ընկավ: Այն կողմերումն ձմեռող թոչուն-

ներն արդեն պատրաստվել ելին ճանապարհվելու։ Բաղերը, սագերը, կտցարները յերամ յերամի հետևից անցնում ելին նրա գլխավերեվով։ Բայց ջրահավը չեր շտապում։ Նրա հայրենիքում նոր խոտը դեռ չեր ծիել և դեռևս անտեղ տեղ չկար թագնվելու գիշատիչների սուր աչքերից։

Բայց ահա թուան գնացին կտցարների վերջին յերամները։ Ջրահավը գիշերը ճանապարհ ընկավ։ Նա վոտով եր գնում։

Մի քանի որ գնալուց հետո, նրա ճանապարհը կտրեց Զիբրալտարի նեղուցի լայն փովածքը։ Բայց ալդ չեր կարող շփոթել ճանապարհորդին։ Մթության ծածկոցի տակ նա արագությամբ թուավանցավ ջուրը, և մյուս ափին իջնելով, առանց շունչ առնելու շարունակեց իր ճանապարհը։

Նա գնում եր իր հայրենիքը, իրեն միայն հայտնի ամենակարճ ճանապարհով։

Նրանից առաջ, ծովալին ճանապարհով թոշում ելին բաղերը, կարապներն ու սագերը, ճայերն ու սուզահավերը կտցարների յերամները գնում ելին ափով։

Իսկ ջրահավը միայնակ շեշտակի քայլում եր ու քայլում գետնի վրալով, թերի ոգնության դիմելով միայն այնտեղ, վորտեղ ալդ անհրաժեշտ եր նրան։ Նա շատ արագ եր գնում։ Վտանգից խուսափելու համար նա ցերեկը հանգստանում ու կերակրվում եր, իսկ գիշերը՝ մթության, խոտի և թփերի ծածկութի տակ, առաջ եր վազում։

Արդեն մալիսի վերջն եր, յերբ նա հասավ լեղեգով պատած ծոցիկը, վորը քիչ առաջ վալրի սագին վորպես ապաստան եր ծառալում։

Գիշերը կարճանում եւ ժամանակ ե վոր հոգնած վոտքով ման լեկողը մտածեր հանգստի և ապահով տեղի մասին։

Բայց ծոցում նա անելու բան չուներ։ Ջրահավն ուղևորվեց իր համար ապաստան վորոնելու դաշտերում, անտառից դենը։

Մի կողմ թողնելով գլուղին կից արտատեղը, վորտեղ ապրում եր կաղարկին յերկու անգամ բռնող վորսորդը, նա վազեց

աշնանացանքերով, ընտրելով այնպիսի տեղեր, վորտեղ բարձրացած արտն սվելի խիտ եր։

Հանկարծ նա դուրս յեկավ դաշտի բաց տեղը. մատղաշ ծիլերն այնտեղ տրորել և արածել եր սպիտակածակատ սագերի զուրկը։ Սագերը չնկատեցին նրա հանկարծակի յերեալը։ Նա իսկունեեթ հետ ծլվեց խոտերի մեջ և սկսեց գիշերելու պատրաստություն տեսնել։


Մի քանի ըոսկելից հետո նա տեսավ, վոր սագերը վեր կացան դաշտից և ավելի ու ավելի բարձրանալով թուան դեպի հյուսիս։

Ալդ վալրի սագն եր և իր արուն։

Արու սաղը ծոցիկից բերել եր այստեղ իր ընկերունուն, և նրանք վերջին որերն այստեղ ելին ապրում։ Լավ կերը արագությամբ վերականգնեց վիրավոր սագի ուժերը։ Նրա հիվանդ թեր բոլորովին լավացել եր։

Ալժմ մտերիմ զուրկը կարող եր վստահել յերկուառվ անցնելու մինչև իրենց հայրենիքը մնացած։ Մեծ ճանապարհի մասը։





ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Սնցել եր կես տարի այն ժամանակից, ինչ Միշկան բաժանվել եր վայրի սագից: Վիտերսկի փողոցներում ձյուն եր նստած:

Միշկան նորից հիշեց վայրի սագին այնպես, ինչպես նա հոր հետ հանդիպեց նրան, լեռը լեկան նրան ազատելու։ Նրա աչքի առջևն եր թռչունի ճակատի սպիտակ կիսալուսինը, փայլուն հայացը և զգաստ—ուազմի կեցվածքը։ Յեվ նորից անցավ նրա մտքով։ «Միթե նա չհասավ իրեն հայրենիքը»։

Նախասենյակում զանգահարեցին։ Միշկալի հայրն իր սենյակից անցավ դուռը բանալու։ Մի բոպելից հետո նա վորդուն կանչեց իր առանձնասենյակը։

— Կարդա բարձր, — ասաց հայրը և մեկնեց Միշկալին նոր ստացված նամակը։

Միշկան պատուեց ծրարը, բաց արեց փոստի քառածալ թուղթը և կարդաց։

Թուշնաբանական կոմիտե, 22 հոկտեմբերի 19... թվի։

Համելի պարտականություն ենք համարում հաղորդել Ձեզ հենց նոր ստացած տեղեկությունները։ Ձեզ հետաքրքրող սպիտականական վայրի սագի մասին, վորին դուք նեան եք առել № 109 C սերիայի ողով։

Արխանգելսկ խողաքից 50 վերսի վրա, Սպիտակ ծովի ափին ընկած Պրիբրեժնիյ գյուղի ուսուցիչը, սիրալիր կերպով հաղորդում ե մեզ իր հետեվյալ հետաքրքիր դիտողություններ։

Անցյալ տարվա սկզբին նա բափառում եր ծովի ափին իր վորտորդական տան հետ։

Նունը նրա աչքի առաջ բոցեց մի ջրահավ։ Ուսուցիչն առաջ յերեք չեր հանդիպել այն կողմերում այդ հազվագյուտ բոչունին։

Տեսնելով վոր ջրահավը, հազիվ բարձրացած խոտից, խկույն նորից իջավ նրա մեջ, ուսուցիչը նպատակարգվեց տան ոգնությամբ դուրս քեզ այնտեղից բոչունին։ Բայց ջրահավն իր սովորությամբ սկսեց փախչել վոտով։

Ապարդյուն յերկար հալածանելից հետո, տունը՝ վոր վագում եր ջրահավի հետեւով, ուսուցիչն հասցեց ծովափի մերկ ժայռին։ Ժայռից տան վրա հարձակվեց մի սապսան, իսկ ջրահավն ոգտվելով նրա սփորբությունից, ծլկվեց ինչ վոր տեղ։

Զարմացած, անսպասելի հայտնված բազեյի կատաղի հարձակումից տան վրա, ուսուցիչը զննեց ժայռը յեզ նրա մեջ նկատեց սապսանի բունը, հողից ընդամենը չորս արչին բարձրության վրա։ Նա չփառական մուտքանալ սապսանի բնին, վորովիետեվ համարձակ գիշատիչը, կարծես թէ պատրաս եր կպչել մարդու յերեսից իր սարսափելի նիրանեւով։ Ուսուցիչը հենց ուզում եր նեռանալ, վոր իր վոտերի տակ տեսավ ընի վրա նստած սպիտականական սագին։ Արագությամբ հանեց կուրտկան յեզ զցեց բոչունի զլիսին։ Այսպիսով նրան հաջողվեց սագին բռնել։ Թուչունը ձեռքին, նա հաջողությամբ բռնեց վտանգավոր տեղը։

Սագի վոտի վրա ուսուցիչը հայտնաբերեց Ձեր հազցրած ողը։ Գրի առաջ նրա համարը յեզ բոչունին ազատ բռնեց։

Այնունետեվ ուսուցիչը հանախ գալիս եր նեռվից դիտելու սագին, մինչեզ վոր նա նույն հետեւ յեզ նեռացավ նրանց հետ ժայռի տակից մոտակա լինը։


Գիտնականները շատ անգամ են գտել վայրի սագերի բներ սապանների բնի կողքին: Համարձակ բազեների պահպանության տակ, այդ սագերն իրենց ապահով են զգում քենամիներից:

Սակայն զիտուրյան համար մինչեվ այժմ հանելով ե մեռմ, թէ ինչու այդ դաժան զիւստիչները ձեռք չեն տալիս նույն հանելու ամբողջ ժամանակի ընթացքում իրենց դյուրահավաս, բայց տնպատճան հարեվաններին:

Համենայն դեպս ԶԵՐ Վայրի սազն այս ՏԱՐԻ բարեհաջող
կերպով նույն է հանել: Հույս ունենանք, վոր յԵՐԵՎԻց նա
նորից կրթենի մարդկանց ձեռքը, յԵՎ նա, ով կրոնի նրան,
կպատմի նրա հետագա վիճակի մասին:

Ե ՏԵՂԻ ՅԱԽՄՊԱԽԻ...

Միշկան ստորագրությունը չկարողացավ ջոկել:



2763

553

ԳԻԱԸ | ԱՐԵՎԵԼԻ

ВИТ. БИАНКИ
НА ВЕЛИКОМ МОРСКОМ ПУТИ
ГИЭ ССР Армении, Эривань.

2763
12-69.